հապանեանի, Գաղատիոյ երբեմնի Հռոմ. Հայոց  
Առաջնորդին կողմէ:

Ասով Արեւելք իր խորհրդաւոր դիմաստուները  
քօղաղերծ ցոյց տուաւ Արեւմուտքի լոյսերուն  
մէջ, ուրան՝ հայ ցեղին Գրի եւ Գրականութեան  
Ս. Գ.

ԳիՏԵԼԻՎ.— Կորին Մետրոպի կ'ընծայէ Առակց  
միայն Թարգմանութիւնը. յետ պատմելոյ գրի գիտը կ'ըսէ  
Յէ առաջին անգամ Մետրոպի իմաստութեան ծանօթութիւնը  
գերադասած է, ըսելով. «Ճանաչել զիմաստութիւն եւ  
զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Այսբան դա-  
րբէ վերջ Սողոմոնի այս առակը խորհրդաւոր ուղղութիւն  
կուտայ մեր ընթացքին:

Աստուածաշունչի հայ Թարգմանութիւնը, կատար-  
ուած է, սկսելով 414ին գրբրու գիտին անմիջապէս վերջ,  
գլխաւորութեամբ Սահակ Մետրոպի եւ օմանդակութեամբ  
առաջին Թարգմանիչ աշակերտներու:

Իսկ լեզուն Գողթան վիպասաններու լեզուով եղած  
է հոյակապ, նոյն մաքրութեամբ, նոյն արուեստով, նոյն  
ճաշակով եւ փայլած է իբր պայծառ գիտաւոր Ե. Գարու-  
սիկըրէի գրեթէ կէս դար: Ասով կոչուած է Երուպացի գի-  
տուններէ Դժխոյ Թարգմանութեան:

## ԱՆԱՀԻՏ(\*); ՄԱՅՐ ԶԳԱՍՏՈՒԹԵԱՆՑ

Հայոց հեթանոսական կրօնը մեր իզական սե-  
ռի սրբութեան աւանդապահ ճոյս կուտայ Հայ



Պանթէոնին չքնաղագոյն  
զարդն եղող Անահիտը  
կերել կեանք եւ կեցուցիչ  
Հայոց աշխարհի. ինչո՞ւ  
արդեօք գիցուչին ամէ-  
նէն ժողովրդական, ընդ-  
հանուր եւ ջերմ պաշտա-  
մունքի առարկայ էր: Ին-  
չո՞ւ կերել փառք Հայոց  
աշխարհի տիտղոսով պատ-  
ուում էր, որովհետեւ  
մայր էր զգաատուՅեանց:  
Անոր համար միայն եօթը  
բազմիներ կը յիշուին  
կանգնուած, գլխուրն էր  
Նրիզայինը, սակեմայր

(\*) Անահիտ ենթադրաբար կը նշանակէ անախտ, ան-  
բիծ, անարատ: Անահիտ Հայոց ամենասիրելի դիցուհին  
ի պատուի էր նաեւ օտարներու բով եւ Հռովմայեցոց մէջ  
այս հաւատքը տարածուած էր Սէ ով որ սակեմայր Անա-  
հիտին գանձերուն ձեռք մխեր, կը պատուէր կուրուՅեանք  
եւ անդամալուծութեամբ:

Անահիտի անունը կը նոյնանայ Զրադաշտական մեծ

եւ սակամծին կրչուած, ոչ թէ սակիէ ճուլումը ըլ-  
լալուն, այլ վասն զի աստուածուհին սակի մարմնով  
ծնած կ'աւանդուի:

Ուրեմն մեր նախնիք Անահիտով կը պաշտէին  
բարբերու սրբութիւն, զգաստութիւն, ահա պատ-  
գամը խոր անցեալին, մեր նոր սերունդին ուղ-  
ղումը. զմայլանքով կը յիշենք թէ երբ աղխաւի  
պատահարներ մ'օր անդորր կեանքը խուճապի մատ-  
նեցին, փափկատուն հայ օրիորդը, այնքան տկար,  
բայց արիացաւ իր ցեղին սրբութեան բուրանուէր  
ոտուճ ունենալու դէպի քարավայներ, անոնց  
կատաղի հոսանքին մէջ թաղուելով՝ անաղարտ  
պահեց իր կուսագեղ ամբիժ հոգին, եւ ասի երէկի  
արեւնոտ դրուագն է, յեղ յեղումը շատ անգամ-  
ներ: Լաւ է մեռնիլ քան թէ խոթարել աղբն  
նուիրական աւանդները:

Սակայն բուրովին անհասկնաւի է Սարա-  
բոնի մէկ հաստուածը, զոր յառաջ կը բերէ Գէորգ  
Մեղրոպ իր Բնական Պատմութեան Ա. հատորով  
(Տպգր. 1914, Կ. Պոլիս, էջ 308), որով Անահիտի

ոգիներն մեկուն հետ. կը պաշտուէր Հայոց դրացի արե-  
ւելեան, հարաւային եւ արեւմտեան բազում ժողովուրդ-  
ներէ, որոնց մէջ կը ներկայացնէր *սէրը*, բնութիւնը, իզա-  
կան զօրութիւնը, արգասաւորող գինի, տարբը, լուսնի  
անձնաւորութիւնը, վերջապէս պատերազմի ոգին: Անահիտ,  
Տիանա, դուստր Արամազդի եւ Լատոնայի, բոլր Ալոր-  
դոնի, որ կուսութեան շնորհն ընդունց Արամազդին:

համար մեր կաղմած հաւատքը իբր մայր զգաստութեանց կը ջնջուի: Ահա ակնարկուած հատուածը. «Պարսկական աստուածները, առանց բացառութեան, կը պաշտուէին Սարեստանցիներէն եւ Հայերէն, բայց Անաշիտը Հայոց համար մասնաւոր պաշտամունքի առարկայ էր, անոր համար մեհնեաններ կառուցուած են զանազան վայրեր, մասնաւորաբար Եկեղեցաց գաւառին մէջ եւ այդ մեհնեաններէն իւրաքանչիւրին յատկացուցած են նուիրեալ երկուսու սպասարկուներ ու աղայիներ. մինչեւ հոս զարմանալի ոչինչ կայ: Բայց իրենց բարեպաշտութիւնը աւելի հեռուն կ'երթայ եւ սովորութիւն կ'ըլլայ որ ամէնէն տեւի նշանաւոր անձեր դիպուհին կը նուիրեն իրենց կոյս աղջիկները: Ինչ որ բարգիւր որ այս վերջինները երկար ատեն Անաշիտի մեհնեաններուն մէջ պրօնկիլէ յետոյ դիւրութեամբ կարենան ամուսնանալ, որովհետեւ այս պատճառաւ ոչ մէկ դոյզն պժգանք ցոյց կուտան», (Ստրաբոն, ԺԱ.): Յետոյ Գէորգ Մեսրոպ Թեթեւ դիտողութեամբ կը բաւականանայ ըսելով թէ պրօնկիտցումի պարագան տեղեկան կամ սահմանափակ շրջանակի մէջ կատարուած բան մըն է, Փիւնիկեան կամ սեմական Աստարտէի պաշտամունքին ազդեցութիւնը ցոյց տուող: Այս կերպով Անաշիտ ոչ եւս կ'ըլլայ մայր զգաստութեանց, եւ որպէս զի Անաշիտ մնայ ի պատուի, հզօր փաստարկութիւն մը անհրաժեշտ է, զայդ կ'ընծայէ մեզ բազմերախտ Միսիսարեան Հ. Ղուկաս Ինձիճեան իր Հնախօսու-

թեամբ (Հատոր Գ. էջ 178): Յիշեալը կ'ըսէ այսպէս. «Զարմանալի է տեսնել որ Անաշիտի մասին հակառակ կը վկայէ Ստրաբոն (ԺԳ. 58) իբր թէ օրէնք եղած ըլլայ Հայաստանի մէջ աղջիկներ ձօնել Անաշիտի անոր մեհնեանին մէջ պղծուելու: Մեր նախնիք Անաշիտը այնքան սուրբ եւ մաքրասէր կը դուռանին, մինչեւ անգամ աստուածուհւոյն ընկերութեամբ կը մատուցանեն ընտրուած կոյսեր, որոնց ինամուտ պահպանութեան դաստիարակ կը կարգուէր դիպուհին, ուստի կարելի է կարծել թէ այս մտքով օրիորդներ Անաշիտի մեհնեանին ընծայուած են կրթուելու կամ դաստիարակուելու նպատակով, իսկ պղծութիւնները, եթէ ստոյգ համարենք, պէտք է վերաբերին Աստղկան, որուն բարեւոյս տեղ էր Վազէվազեան մեհնեանի մէջ, մատենագիրը գտնուելու իրարու հետ շփոթած է»:

Զգաստութեան, բարբերու սրբութեան նուիրուած այս տողերը արձանագրուելու պահուն չկարծուի թէ գրողը Եպիմէնիտէսի(\*) ընով թմրած չբեւեակայեր թէ արդի աշխարհը չէ երէկի հետ նոյն, երբ ամէն ինչ միապաղաղ, սուրբ, ջինջ, ա-

(\*) ԵՊԻՄԷՆԻՏԷՍ, Գնոսացի փիլիսոփայ է. Գարու (Նախ բան գիր.) կէս մը պատմական, կէս մըն ալ առասպելական անձնաւորութիւն, յաւերժահարսի մը գաւակ, որ բնացաւ 57 տարի, բարայրի մէջ: Իպիմէնիտէսի բունը եւ զարմուտը առարկայ եղած են մանաւանդ բարբաւկանին մէջ յանախակի ակնարկութեանց:

մէն ինչ ընտանան կ'ընթանար. մինչդեռ այս չէ ներկան, նոր նոր ըմբռնումներ քանդած են ընկերային կառուցուածքներ, սխալ հասկըցուած ընկերվարութիւնը նոր նոր պատգամներ կ'արձակէ, որուն հաւատացեալները ընտանեկան բարոյականի դէմ կ'ընդվզեն, այդպիսիներուն նպատակն է ուրացում ընտանիքի սրբազան դերին, ջատագովել ազտասէր, կուսիլ տան եւ ընտանիքի հասնատութեանց եւ ամէն ձեւի տակ կրօնի դէմ եւ այս ամէնը ազդերու կորուստին համար դաճալէժ մ'ըն է:

Բաղաքակրթութեան սնանկացում, ինչպէս լաւ արտայայտած է Սմբերիայի երբեմնի նախագահ Ռուզվէլտ, մեզ Հայոցս բիւրեցս պաշտելի հոգի, իր Բնկերվարութիւնը քննադատուած անուն պրակով, որուն հայ թարգմանութիւնը հրատարակուած է (1910 Աղեքոսնդրիա, Խնայողական տպարան): Յարգելի նախագահը չընդունիր ոչ բացարձակ ընկերվարութիւն եւ իմաստուն փաստերով կը քննէ թուր ընկերվարականներու տեսութիւնները:

Ուրեմն մենք ալ պէտք չէ տարուինք նոր դաւանանքներէ եւ յաւատ պաշտենք մեր ազգային նկարագիրը բնորոշող առողջ բարոյականի վարդապետութիւններ, որոնց շաւիղը կը վարէ զմեզ մինչեւ Հայ Պանթէոնի վարդ եղող Անահիտի բազնին տըրը:

Աւելի գեղեցիկ է դէմք մը ամօթի շուռազուանքով գունագեղուած քան թէ երբ բուռ բուռ

ամէն արհեստական ներկերով շարուռի: **Ս**յս առթիւ աւելորդ չէ անդրադառնալ նաեւ մեր այն երկրասարգներուն՝ որ օտարութեան մէջ ցրուած կը նստընտրեն օտարուհիներ՝ անոնց հետ յաւիտեան կան միութիւն ուխտելով, բայց ընդհուպ իրենց խղճի դատաստանին առջեւ անօգուտ վըջումով կը դառնացնեն իրենց կեանքը. սակայն միթէ նուազ մեղապարտ են նաեւ իրենց ցեղակից կոյսեր, որոնք իրենց անտանելի յաւակնութիւններով կը խրաչեցնեն ընտրելիներ՝ իրենք զիրենք անմերձեանաւ ընելով իբր գերազանցութիւններով օժտուած կուսքեր: Ի՛նչ անմտութիւն, մինչդեռ երկու սեւերու միութեամբ ցեղին ձայնը օրհնութիւն կը տեղայ, երբ զույգը ներդաշնակուած ուրոյն ձեռքերով՝ ի յաւիտենից՝ մէկմէկու կը պատշածին կենը իր շնորհներով, այլը իր դործունէութեամբ կը ստեղծեն հայ ընտանիքը, բո՛յն երջանկութեան:

**Մ. Գ.**

Հայ Միտքը. — Հօր կամքը կը յաղթէ ամէն բանի, իսա ժայռի մը վրայ նստած կ'աղաղակէ. «Պիտի ազատիմ աստուածներու հակառակ»:

**Մ. Զերազ**

— Կեանքի բոլոր ճամբաները գիտնալը մարդը աւելի կարող կ'ընէ իրեն յարմարագոյնը ընտրելու ու բոլոր ճամբաներուն եղբայրութեան գաղափարը մարդերը հաշտ կ'ընէ իրարու:

**Սրբակ Զօպանեան**

## ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՎՐԱՅ

ՏԻՐԱՊԵՏՈՂ ԱԶԳԵՐՆ՝ ԸՍՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Անի քաղաքն՝ իր անառիկ դիրքին պատճառաւ՝ եր վրայ հրաւերած է գտնադան ազդերու ուշադրութիւնն եւ անոր տիրապետելու մարմաջը: Այդ աղբերն եղած են՝ քաղաքին — կամ թէ նախնական սպաստանաբանին — տէրերէն ետք՝ Բիւզանդացիք, Պարսիկք, Վրացիք եւ Մոնղոլք, որոնց բուրն ալ իրենց արձանագրութիւնները ձգտած են հոն: Ասոնցմէ գուրս՝ ժամանակ մըն ալ Արաբացիք տիրապետած են Անիի վրայ, բայց անոնցմէ ո՛ր եւ է արձանագրութիւն չէ գտնուած հոն մինչեւ հիմայ:

1903 թուականին՝ իմ Անի երթալուս գլխաւոր նպատակն էր քաղաքին եւ մօտակայ պատմական վայրերու հայերէն արձանագրութիւնները հաւաքել: Եւ չորս ամսուան ընթացքին մէջ ընդօրինակեցի ու տպագրութեան յանձնեցի 225 արձանագրութիւն, զորս հաւաքեցի Անիի, Բաղնայրի (Ղողլեջա) եւ Մարմաշէնի (Ղանլըջա) մէջը:

Այս արձանագրութիւնները հետեւեալ շրջաններու կը պատկանին.

Ա. — Հայկական շրջան (622 - 1045), որ ժամանակ Հայերը կը տիրապետէին հոն:

Բ. — Յունական շրջան (1045 - 1064), որ ժամանակ Յոյները կամ Բիւզանդացիք կը տիրապետէին: Բիւզանդացիք մեր մէջ կոչուած են նաեւ «Հռոմներ»:

Գ. — Պարսկական Սելջուկեաններու շրջան (1064 - 1124, 1126 - 1161, 1166 - 1174 եւ 1192-1199): Այս Սելջուկեաններն իրենց իրաւունքը ծախած են Շէրդադեաններու, որոնք Սելջուկեանց անկումէն ետք ալ (1194) շարունակած են տէր մնալ Անիի:

Դ. — Վրական շրջան (1124 - 1126, 1161 - 1166 եւ 1174 - 1191): Այս շրջանը՝ Հայոց համար բարեբախտ շրջան մը եղաւ, վասն զի 1191ին՝ Լուսի եշխանընէն Զաքարիա եւ Բւանէ, թամար թագուհիի (1184 - 1212) բարձրատիճան հայ պաշտօնատարներն. Անին դրաւեցին եւ շրջակայ վայրերով միասին իրենց իշխանութեան տակ առին, 1199էն մինչեւ 1236: Անիի արձանագրութիւններէն մէկուն մէջ ալ ասոնք կը կոչուին՝ «թագաւորք Հայոց»:

Ե. — Մոնղոլեան շրջան, յորում միեւնոյն իշխանները շարունակած են իրենց պաշտօնները 1236էն մինչեւ 1348:

1348էն Անիի արձանագրութիւնները կը լռեն ի սպառ:

Կ. Յ. ԲԱՍՄԱԶԵԱՆ

ՀԻՒԱՆԳԻՆ ՄՐՍՈՒՆՁԸ

Առ Թուշնիկն

Գարնանային սիւք ցողաթեւ,  
Ահա վերջին տրւաւ բարեւ,  
Ջերտ առուրց հասաւ խորշակ,  
Թառամեցոյց խեղճ մանուշակ:  
Վարդ եւ շուշանըն լուսամտոյր  
Ահա զանոյշ կորուսին բոյր  
Եւ իմ աչքեր արտասուագին  
Հետզհետէ կը նուազի՛ն...:

Թրուշնիկ իմ սիրուն,  
Մտեցաւ աշուն,  
Երբ համնի ձրմեւ,  
Ողջ գտնե՛ս զիս դեւ:

Ո՛հ, ալ չունի սիրտ ոչ մի յոյս,  
Մարի՛ Յրրագ Թըշուառ հոգւոյս,  
Եւ տերեւոց մէն մի ԹսԹափ  
Կարծեմ առուրց իմ պակսի ջափ:

Իմ կարճ կենաց մէն մի վայրկեան  
Քալլ մ՛ալ վարէ զիս ի տապան,

Բայց, ո՛հ, կ'ուզեմ եւ դեռ ապրիլ,  
Կ'ըղձամ նորէն տեսնել զկարիլ...

Թրուշնիկ իմ սիրուն,  
Մտեցաւ աշուն,  
Երբ համնի ձրմեւ,  
Ողջ գտնեւ զիս դեւ:

Երբ նորարոյս գարուն զբարձ  
Դայ ի ճակատ պրտակազարդ,  
Պիտի կրրկնեւ դու հրքճուագին  
Ըզճրուող ին չո զուռջին:  
Պիտի տեսնեւ բլուրն ու անտառ  
Եւ ոսոստեւ ծառէ ի ծառ,  
Բայց եւ աի ոչ տեսնեմ, առ՛ղ,  
Ոչ վարդ, անուակ եւ ոչ քո խաղ...:

Թրուշնիկ իմ սիրուն  
Մտեցաւ աշուն,  
Երբ համնի ձրմեւ,  
Ողջ գտնե՛ս զիս դեւ:

Սիրուն Թրուշնիկ, քիչ օրէն, ա՛հ,  
Յիմ սիւնեաց կը բամէ մահ...  
Վերջին անգամ քո դայրալիկ  
Ես կը լըսեմ մեղամաղձիկ...:  
Դուցէ քընած հոգւոյս վերեւ  
Ուրուր ա՛ագուս սասանին Թեւ,

Լըստին բուին գուցե եղբրք,  
Այլ սըրտառուչ, ա՛հ, ոչ քո երգ...:

Թրուչնիկ իմ սիրուն  
Երբ գաս ի գարուն,  
Մարդիկ զիս մոռնա՛ն...  
Յիշէ՛ գիմ տապան:

*Նորէն Արքեպիսկ. Նարպէյ*

(1831 - 1892 Նոյեմբեր 17)

(Կ. Պոլիս)

ԾԱՆՈԹ. — Հին ծիծղուն օրերու այս մեծանուն եկեղեցականին կարասի երգն է այս տաղը. յիշեալ ժառանգորդ Ս. Ղազարու Ակադեմիային ընծայած փառքի դափնիներուն, կանուխէն Թրձաացուց քնար, շարժեց գրիչ, որու տաց սրբասան բեմին վրայ պերճախօս բեմբասացումիւններով եւ միշտ շահեցաւ ընդհանուր համակարանք իբր բեր-  
ժող, մատենագիր, հմուտ լեզուագէտ, կենցաղագէտ, իր անձին հրապոյչըովն. ալ առինքնող: Ափսո՛ս, որ եղերական վախճանով անփառունակ շիշաւ: Արդ նոր սերունդին մէջ անոր յիշատակն արՅնցնելու համար սոյն տաղը կ'արտատպենք, որով Նարպէյ Սրբազան իր վերջին ժամերուն գուշակելով իր մոռացումը՝ մեծ հոգիներու ամենամեծ տառապանքը, դառնագին սրտով աղբըսած է Թուչնիկին չմոռնալ զինք: Ի՛նչ անանց սիրովանք սրտառուչ:



Այս խորագիրն է Հ. Սիմոն երեմեանի մէկ երկասիրութեան զոր կ'ընտրեմ այս տողերուն վերնագիր: Ո՛վ չպաշտեր Գեղեցիկը, մտաւորական ամէնէն ջքնաղ կատարելութիւնը, որ կը վեմագնէ մարդք, դէպի գերազանցութեան բարձունքը վերելակեւումն: Ասոր հղօր փաստը Հնութիւնը կուտայ մեջ: Ինչո՞ւ նախնի կիսավայրենի ազգերու մէջ Հելէնքը գերակշիռ դիրքով նախանձելի եղած էր հանուր աշխարհի, որովհետեւ ան սիրած էր Գեղեցիկը իբր աստուած - աստուածուհիներով, իմաստութեան հրականերով, գրականութեան եւ գեղարուեստի փառքերով, եւ ազգեր ուզեցին աշակերտիլ անոնց, Թափանցել անոնց լոյսերուն, ինչպէս մեր նախնիք եւս պանդուխտի ցուպն առած՝ մեկնեցան Աթէնք նոյն նպատակով. այժմու նման, որ սովոր ենք եւրոպայէն ականկալել բարձրագոյն կրթութիւն: Այս մտածումը ազգերու երջանկութիւնն է: Ուստի երբ անցեալ տարի Մարտին կարդացի Ֆրանսերէն լրագիրներու մէջ աճուրդը եղերարախա նախարար Լուի Պարթուի գրքերուն, որ արժեց 2,500,000 ֆրանքէ աւելի, մանաւանդ նոյն հրապարակային վաճառահանդէսին մէջ Հիւկօի կամ Լամարթիւնի մէկ հեղինակութեան ընծայուած գլխը 60,000 ֆրանք, ըսի իրովի, արդարեւ մեծ ազգ է ֆրանսականը. մեծութեան ախտըսը շահած է ջերմ սիրով դէպի գրակա-

նութիւն, փախչում, նոյն խել արուարձաններու պողոտաներ, հրապարակներ գրական մեծ մարդերու անուններուն նուիրուած են, ինչպէս նաեւ անմահ-անուն Բանաստեղծ - Մատենագիր Վիկտոր Հիւսիսի նուիրուած մեծարանքք անոր մահուան լիսնամեակին առթիւ, Յունիսի մէջ հրապարակային հանդէսներով, որոնց անհաղորդ բնաց հայն ալ Պ. Արշակ Զօյլանեանի նախածուկնութեամբ, սարքելով տօնակատարութիւն:

Խորին հիայտում այն նորահասներուն որոնք այս տեղ իրենց գրքերուն վրայ հակած՝ հազիւ ուրեմն իրենց շուրջը ակնարկ կ'արձակեն, միշտ հետամուտ ուսումնասիրութեան: Ահա՛ մատաղասի պատմենակ մը կամ գեղածաղիկ Օրիորդ մը նոյն տենչն ունին եւ իրենց նորարդութիւն իմացականութեան հազիւ մատչելի հատոր մը, զոր օր. Խուսոյի էմիլը անյագ ակտրժով կը լսփին:

Մենէ ո՛վ կրնայ պարծիլ ոչ թէ Լուի Պարթուի մեծերած գրքերու քանակով, այլ նոյն խել միայն հեղինակի մը գրքին նուիրած 60,000 ֆրանք արամադրած ըլլայ իր առանին մատենադարանին, այսպիսիներ հազուագիւտ են մեր մէջ, բայց կան դեռ պատուաւոր բացառութիւններ, անոնցմէ է Չիկաքոյէն ազգասիրական բարձր ոգւով գնահատելի Պ. Աստիկ Տէվէնեան, գորգի վաճառական, որ տարիներով հաւաքած 40.000 տոլար արժող արեւմտահայ գրականութեան հազուագիւտ հա-

տորներով ձոխ մատենադարանը նուիրեց Հայաստանի, անմահ անուն ժառանգելով մեր պետական մատենադարանի հաստատութեան մէջ առանձին սենեակ գրուած՝ *Գրագարան Աստիկ Տէվէնեանի* յորջորջումով, յանձն առնելով Չիկաքոյէն մինչեւ Լէնինկրատ փոխադրութեան ծախսը. իրմէ տարիներ առաջ ալ ազգասէր իրաւագէտ ողբացեալ Յակոբ Յակոբօֆ իր ընտիր գրքերու մեծերքք նուիրած է նոյն պետական մատենադարանին:

Գրքին սէրը քաղցր է. «Այս սիրով վառն էին, կ'ըսէ Ալիշան, եղիշէն՝ որ լեռները պտտելով մարմինը մարախի պէս չորցած, խել Ղազար իր հայրենական ստացուածքը վաղարշապատի ուսումնարանին համար ծախելով՝ հազարամէկ նեղութիւն կրելով եւ հալածուելով, այս երկուքն Թողոցին մեզի այն պատմարանութիւնները՝ որ Յունաց ամէնէն ընտիր ոճով գրած պատմութիւններուն հետ կը համեմատուին, որովհետեւ անոնք ջխտրեցան միայն մարմնոյ անունդը, այլ հոգիի, ինչպէս կ'ըսէ Խիկար. «Հացը մարմին կը շինէ, իմաստութիւնը՝ հոգի»:

Որքան բուռն է ուսման սէրը, որ մինչեւ անգամ աղքատ, ընչազուրկ ուսանողին քաղցր է իր երակներուն մէջ շրջան ընող մաքուր արխար ի վաճառ հանել, անոր գնով հատուցանելու. Թոշակը իր յաճախած վարժարանին, նուիրակա՛ն զոհողութիւն:

Բայց անհրաժեշտ է գրքերու մասին իմաստուն  
ընտրութեան հետեւիլ, որովհետեւ մամուլին ամ-  
բողջ արտադրոյթը կարելի չէ փակ աչքերով ծա-  
փահարել, անոնց մէջ կը սպրդին զառանցանքներ,  
վատնար մտքեր: «Բառական չէ, կ'ըսէ Տէքարն»,  
լաւ միտք ունենալ, կարեւորը միայն լաւ գործա-  
ծելն է»:

Իրիջը երբեմն իր նուիրական դերէն կը շեղի եւ  
կը դառնայ մեղապարտ գործիք մը. պէտք է վա-  
սակար հատորներ հրադատութեան մատնելով խա-  
րուկահանդէս սարքել: Ո՛րքան ցանկալի է որ գրող-  
ներ դեռ հրապարակ չիջած՝ յտակ, յանկուցիչ լեզ-  
ուով առողջ գաղափարներու ծառալումին ջանադիր  
ըլլան: Յայտնի է թէ ամէն նիւթ մշակուած է հզօ-  
րագոյններէ եւ ինչ որ գրուի, կրկնութիւն է սկիզ-  
բէն ի վեր շրջանը ըրած բացատրութիւններու. պատ-  
շաճ նորութիւններով, մտքի գիւտերով, ներդաշնակ  
ոճով զարդարել գրութեանքը ճարտարութիւն է, հազ-  
ուադէպ է բառով մը միայն գաղափար մը հրաշա-  
կերտել: Բայց այս՝ մեծ հանճարներու փառքն է,  
որոնց համար զգացուած մեծարանքը սրտին պար-  
տադիր սպաւորութիւնն է, ոչ վաղանցիկ, այլ յա-  
ւերժական: Ազգի մը մեծութեան վկաններն են անոր  
մեծ բանաստեղծներն, մեծ մատենագիրներն: Սպար-  
տա, տագնապի մը ատեն զօրավար մը խնդրեց Ա-  
թէնքէն: Աթենացիք, որ կը նախանձէին Սպարտա-  
ցիներուն, զօրավարի տեղ բանաստեղծ մը յղեցին

հեգնանքով եւ սակայն բանաստեղծն ըրաւ զօրավա-  
րէն աւելի:

«Յետ նորա Մեծն Հոմեր եւ Տիրուէոս ի նուագս  
երգոց

Չօգիս արիականս յ'Արիսական վառեցին գոռ:  
Կը գրէ Ռրաւիոս իր Արուեստ քերթողականին մէջ:

Իրասէր Ատոմ (եղիա Տէմիրճիպաշեան) կը  
յանձնարարէ յարգել այն անձերը, որ անցեալին  
եւ ներկային մէջ ծաղկեցուցին եւ պսիպանցին հայ  
լեզու եւ գրականութիւն, թէեւ ատնք կը նմանցնէ  
Վ. Հիւկօի «Թշուառներ»ուն մէջ նկարագրած ծո-  
վամոյն Թշուառին, որ անտես մնացած, հուսկ խեղ  
դամահ կը կորսուի: Այս դառն իրականութենէն  
ազդուած՝ անգամ մը խասգիւղի ներսէսեան վար-  
ժարանին մրցանակի հանդէսին խօսած ճառին իբր  
վերջաբան բուռն յորդոր մը պոռթկաց նոր սերուն-  
դին՝ այսպէս.

«Երբեք մի՛ հրապուրուիք այն մտգական հեռա-  
պատկերներէն, զորս ձեր խանդավառ հոգեոյն կ'ըն-  
ծայեն գրական ասպարէզներ. զձեզ կ'երդուրնցնեմ,  
քար կրեցէք, երկաթ ձեծեցէք, մի՛ գրագէտ, մի՛  
վարժապետ ըլլաք»: (Ե. Տէմիրճիպաշեան, *Գրական  
եւ Իմաստասերական շարժում* Հատոր Բ, 1884 Չ.  
Տետր էջ 166):

Այս խօսքերուն ուժգնութիւնը պէտք չէ միայն  
հիւանդ ուղեղի մը վերագրել, դառն ճշմարտու-

Թիւն է, որ սարսափահար կ'ընէ շատ մը նուիրական հոգիներ հայ մշակոյթի. շատ անգամ ալ իբր հեգնանք կ'անգիտանայ փառքը այնպիսիներու. ա. նուններ եւ ուր ուրեմն վաղուց մոռցուած ամէնքէն շիջելափառ անհետ կ'անցնին անմասն զինուորներու պէս: Թէեւ այս վերջիներն անելի բարեբախտ են, զի երբեմն գէթ հանրութիւնը կը բոցավառէ իրենց յիշատակի բոցը:

Ս. Գ.



**ՀԱՅ ԵՒՏՔԸ.** — Մանկութիւնը այնպիսի հրապոյր մ'ունի, որ փառքին հրապոյրին ալ կը յաղթէ. խորհրդաւոր բան մը կայ մանկան վրայ, որ կը յանկուցանէ, առաջին ճառագայթի մը գեղն ունի, որուն առջեւ հիանալով կը հարցընէ մարդը. «Ո՞ւսկից կուգայ արդեօք»:

#### Գ. Ս. Օտեան

— Եթէ ճշմարիտ է որ մի մարդ կարող է իր մէջ մարմնաւորել մի ամբողջ ժողովուրդ, նրա հոգին, նրա բոլոր առաքինութիւններն ու Թերութիւնները, պայքարող եռանդն ու անընկճելի կամքը գոյութեան կոռի մէջ, անսիրտ, երկամէ խտուծիւնը, անողորմ վճռականութիւնը, երբ պէտք է վերցնել մէշտեղից արգելքներ՝ գերազոյն նպատակին հասնելու համար. ապա համարձակ կարելի է ասել որ Միքէլ-Անճելոն գրել է իր Մովսէսի մէջ, ամբողջ հրէական ազգի էութիւնը, նրա հոգին:

#### Ա. Ա. Հարսնեան

## ՄԱՐԴԵ ՈՒ ՏԱՐԵՐԸ

( Ա Ռ Ա Կ )

Փոթորիկ կար ծովի վրայ:  
Ալիքները շաբում էին  
եւ լուսնանում փրփրադէզ.  
Եւ փլչելով իրենց վրայ,  
իջնում էին մրուայլ անդունդ:

Եւ գունդագունդ  
Խոժոռ ամպեր կայծակնացայտ  
Խուժում էին խօլ երկնքից  
Եւ որոտում որոտագին:

Նաւակի մէջ մի խեղճ ձկնորս  
Օրիսաական Թոհուրոհում  
Անիծում էր եւ հայիցում,  
Կարծելով Թէ՛ հէնց յատկապէս  
Իրեն համար  
Խառնուել են տարերքն իրար:

#### ՄԻ. ԻՍՍ. ՀԱԿԵԱՆ

— Արգի ժամանակը վերացական տեսութիւններով չգոհանար, կը փորձարկէ ալ, միտքն առանց փորձարկութեան կը մոլորի. փորձարկութեան հետ կը սկսի գիտութիւնն եւ ամէնէն ճշմարիտ իմաստասիրութիւնն այն է, որ գիտութեան վրայ հիմնուած է:

#### Եղիա Տէմիրճիպուշեան

**Պատմական պատումներ.**— Անգլիացի Ուելլինկ-  
թըն Գուբըր, որ վաճառելու պատերազմին մէջ Նաբուլէոնի  
յաղթելով «Ալբըն տիւր» երկամէ դուրս կոչուեցաւ, սովոր  
էր բսել, «Ոչ մէկ բան բացի յաղթուելէն, աչնչամ տխուր  
է որքան յաղթելը»:

— **Վաճառելու (Vaterloo)** Պիլիպոյ մէջ գիւղ մը է, ուր  
Անգլիոյ եւ Ֆրանսիոյ դաշնակից զօրքերը Նաբուլէոնի յաղ-  
թեցին (1815 Յունիս 8): Կ'րտուի թէ այս ճակատագրական  
պահուն իրիկունը վրայ հասնելով, երբ Նաբուլէոն տեսաւ  
թէ թշնամիք պիտի օգտուին անկէ, գոչեց. «Իցի՛ւ թէ Յե-  
սուի զօրութիւնը ինձ տրուէր, պահիկ մը արեւը կեցրնելու  
համար»:

**ՄԵՄԱՐԺԷՔ ՆՈՒԷՐ ՄԸ** (Պատմութիւն).— Աշխարհա-  
կալն Նաբուլէոն 1806ին նամակ մը կ'ուղղէ Իտալիոյ կուսա-  
կալ Էթէն իշխանին, որ իր խորթ զաւակն էր, յոյժ սիրելի  
իրեն եւ նոր ամուսնացած էր Պաւերիոյ իշխանուհիի մը  
հետ. այս նամակով կը յորդորէ զանի Նաբուլէոն թէ պէտք չէ  
բոլոր ժամանակը զոհէ տէրութեան զբաղմանց եւ վարէ մի-  
ւրեւնակ կեանք, այլ պէտք է գոնէ իրիկունները նուիրէ ամ-  
բողջովին ընտանեկան եւ այլ զբաղմանց եւ կը խոստանայ  
նուէր մը յոյլ նորապսակ ամուլին: Ի՞նչ էր այդ ընծան իր  
սիրեցեալ իշխանին եւ անոր իշխանուհի Տիկնոջ, որ թագա-  
տորի մը աղջիկն էր. ոչ թէ սակի եւ արծաթ զարդեր, ոչ ա-  
ղամանդ եւ գոհար, այլ «պիտի յղեմ ձեզ, կը գրէ, փորրիկ  
եւ պատուական մատենադարան գրքերով լեցուն»:

Համայն քրիստոնեայ աշխարհի մէջ ունի ինքնուրոյն  
Նկարագիր, որուն համար պատմական պատճառներ կան.  
ամէն քրիստոնեայ եկեղեցւոյ հիմքն Յիսուսի Աւետարանն  
է: Անոր սուրբ անձնաւորութիւն: Բայց բոլոր եկեղեցի-  
ներ իրարմէ կը տարբերին իրենց պատկանած ազգի ստեղ-  
ծագործ ոգւոյն համաձայն: Այն ժողովուրդներն՝ որոնք  
դուրսէն ազդեցութիւն կ'ստանան եւ կուրօրէն կը հետե-  
ւին այդ ազդեցութեան, առանց զայն ենթարկելու իրենց  
ստեղծագործ հոգւոյն հակազուին, անկարող են այդ դրոշ-  
մը տալու եւ այդ պատճառաւ մեծ արժէք մը չեն ներ-  
կայացնէր: Բայց անբաղդատելիորէն մեծ է արժէքը այն  
ժողովուրդին, որ իր ստացած քրիստոնէական կրթութիւնը  
իր հոգւոյն բովին կ'անցրնէ՝ տալու համար անոր սեփա-  
կան դրոշմ:

Այս տեսակէտէն հայ եկեղեցին պէտք է համարուի  
զուտ հայ հոգւոյ ստեղծագործութիւն, որովհետեւ հայը  
գիտցած է իր հոգւոյն բուրային մէջ հակեցնել վերջ միայն  
իրացնել քրիստոնէական վարդապետութիւնը, փոխանակ  
կուրօրէն ենթարկուելու արտաքին ազդեցութեան:

Ահա թէ ինչո՞ւ բոլոր քրիստոնեայ եկեղեցիներու մէջ  
ամէնէն բարձր կը դասեմ Հայ Առաք. Ս. Եկեղեցին...:

Բայց այս երեւոյթն ունի իր պատմական պատճառ-  
ները:

Քրիստոնէութեան առաջին դարերուն, քրիստոնեայ ե-

կեղեցիները իրենց դաւանարական ուղղութիւնը կ'ստանալին այն եպիսկոպոսներէն, որոնք կրօնական համաժողովրու մէջ գերակշիռ դիրք ունէին. այդ դիրքը պայմանաւորուած էր ոչ միայն եպիսկոպոսի հմտութեամբ՝ աստուածաբանական եւ փիլիսոփայական հարցերու մէջ, այլ եւ մանաւանդ իր պատկանած կառավարութեան գորութեամբ քաղաքական աշխարհին մէջ: Այս պայմաններու տակ մեզի համար դիւրաւ հասկնալի է այն գերակշիռ դիրքը, զոր ձեռք կը բերէին Հռովմէական ընդարձակաճաւալ կայսրութեան մէջ գտնուող քրիստոնեայ եկեղեցիներու եպիսկոպոսները, բայց եկեղեցոյ այդ իշխաններէն իւրաքանչիւրին ազդեցութիւնը կախում ունէր իր ներկայացուցած շրջանի վարչական կարեւորութենէն՝ կայսրութեան ներքին ընդարձակ կազմակերպութեան մէջ: Ինչպէս գիտէք, Հռոմ. կայսրութիւնը բաժնուած էր վարչական գլխաւոր շրջաններու, իւրաքանչիւր շրջան ունէր իր ընդհ. կառավարչը, եկեղեցական կազմակերպութիւնն ալ յարմարցուած էր այս դրութեան, իւրաքանչիւր ընդհ. կառավարչի կողքին կար եպիսկոպոս մը, որու իշխանութիւն կը սահմանափակուէր նոյն այդ վարչական շրջանի մէջ միայն: Արդ, Հռոմ ըլլալով վարչական միակ գլխաւոր կեդրոնը, իրեւ կայսրութեան մայրաքաղաք, ուշ կամ կանուխ եւ անխուսափելիօրէն Հռոմի եկեղեցիին կը վիճակէր ամէնէն գերակշիռ դիրքը:

Հայաստանի մէջ ալ նոյնն էր պատկերը. ամէն իշխանական տուն ունէր իր եպիսկոպոսական թեմը, բայց Հայաստան չգտնուելով օտար տիրապետութեան տակ, իբ

եկեղեցոյ պետը կ'ընտրէր ժողովրդավարական սկզբունքի համաձայն. ոչ մէկ ժողովրդի մէջ այդ սկզբունքը չէ գարգացած, որքան հայ ժողովրդի մէջ:

Գեւ եւս Չ. Գարու արձանագրութեանց մէջ կը տեսնենք թէ կաթողիկոսի ընտրութեան կը մասնակցին ոչ թէ միայն նախարարներ, այլ եւ շինականներ: Գուր չէք կարող ինձ'ցոյց տալ ազգ մը, որ այնքան հոգեւին փարած ըլլայ այդ սկզբունքին, որքան հայ ազգը. հայ պետութեան տիրապետութիւնը տարածուած չըլլալով Հայաստանի սահմաններէն դուրս, հայ եկեղեցին ալ սահմանափակուր է միմիայն իր երկրի եւ ժողովրդի մէջ եւ հետեւաբար դարձեր է ազգային եկեղեցի: Այո՛, հայ եկեղեցին գերազանցապէս *ազգային* է, ոչ մէկ ազգի մէջ չկայ իր նմանը. բովանդակ աշխարհի մէջ ան առաջին եկեղեցին է այս տեսակէտէն. հայ եկեղեցոյ լեզուն եղեր է հայ ազգի լեզուն եւ հայ ազգի լեզուն՝ հայ եկեղեցոյ լեզուն: Ճիշդ է, Հռովմէական եկեղեցին մեծ է. իր իշխանութիւնը կը տարածուի շատ մը ազգաց վրայ. բայց ան ճիշդ այդ պատճառով զուրկ է ազգային նկարագրէն, որ յատուկ է հայ եկեղեցիին եւ կարելի չէ զայն չնկատել ազգի մը հոգեկան ստեղծագործութեանց արդիւնք, ինչպէս է Հայ. Առաք. Ա. Եկեղեցին:

Ահա թէ ինչո՞ւ ինձ համար առաւել քան երբեք բարձր է աշխարհի վրայ Հայոց եկեղեցին: Ես իմ հոգու ամբողջ թափովը պաշտում են զայն. այս խօսքեր ոչ թէ ազգասիրի հոգին կը թնկարէ, այլ եւ պատմաբանի հոգին, գիտունի հոգին:

*Գարեգին Արք. Յովսէփէան*

ԳԱՐԵԳԻՆ Ս. ԱՐՔԵՊԻՍԿ. ՅՈՒՍԵՓԵԱՆ  
ԼԻԱԶՈՐ ՊԱՏՈՒԻՐԱԿ Ս. ԷԶՄԻԱՄՆԻ

Ո՞վ է սա եզական ուղեւորն, որ չահարեկիր ձմրան  
խոտոռ դէմքէն, եւ ոչ իսկ անոր սպառնալիքներէն, որուն  
հոգին շքրմանոցի վերածած է հայրական սուրբ սէրը, մեկ-  
նած է կովկասէն եւ իր ընծացքին վրայ աչցելով հայ  
միջավայրեր՝ ոտը դրած է Լոյս-Քաղաքը, Փարիզ, ձմեռ-  
նային անհամարոյր առաւօտ մը. չէ ան հաճոյքներու ստրուկ  
գրօսաշրջիկն ալ պատգամարեր ռազմիկն անդէն. չշողացը-  
ներ մեր աչքերուն Ս. Գեղարդը (\*), ալ բաւ կը համարի

(\*) Այս Ս. Գեղարդը հայկական Սրբուծեանց պար-  
ձանք՝ երբեմն Սյրարատայ Մագազ գառառի Գառնոյ ձո-  
րին մէջ հաստատուած Արի վանքը կը պահուէր. այժմ  
Ս. Լէւոնտին գանձատունն է: Մենաստանս քառակուսի  
բրգանման պարիսպներով շրջապատուած է: Այբի վանքը  
կը կոչուի Լեւոն Լանջքին վրայ շինուած ըլլալուն եւ քա-  
ղաքներու նման փորուած մատրանց համար: Վանքին շի-  
նուածիւր ըստ աւանդութեան Ս. Գրիգոր Լուսաւորչի կ'ըն-  
ծայուի, եղած է այն պատսպարան ինչպէս Լուսաւորչի,  
նոյնպէս Սրբազան Շայրապետներու եւ բարձրաստիճան ե-  
կեղեցականներու, իբր առանձնական կեանքի վայելքներու  
համար, նոյնպէս մեր Ոագաւորաց եւ իշխանաց՝ Ձշնամի  
ասպաաակութիւններէ զերծ մնալու՝ տեղոյն ամբուծեանց եւ  
բացառիկ դիրքերով ապահով ըլլալուն, նաեւ նոյն շրջա-  
նակի ժողովրդոց փրկութեան համար:

կենդանի խօսքը եւ անով միայն պերճ՝ կը բերէ ողջոյններ  
սիրոյ լուսաւորչուանդ նուիրապետութենէ. դիւրահաղորդ է  
ամենուն իբր հին ձանձ մը, բարի, զուարթ, շէշող, ժրպ-  
տուն, բայց լրջախոհ հայրենասէր, մտրով լուսապայծառ,  
այնպէս որ իր քաղցը երեւոյթով՝ հայ գաւթականը՝ շղի-  
Սայուած սեւ սեւ մտածումներով, կը մուռայ պահ մը  
խռովայոյզ երէկը, անստոյգ ներկան: Որովհետեւ բարի  
հայրը յուշար սը է ազգային հին փառքերու, տոհմիկ նո-  
խուծիւններու, որով նկուն հայորդիին մէին նայուածքը  
կը պայծառանայ, կը վանէ իրսէ եղբայրատեցութիւն. ո՞ր-  
քան խորխտ էր երէկ, սիրտը փակած հայրենի պաշտմուն-  
քին, ի՞նչ յեղաշրջում՝ այս արժանքնտիր աղուայեզու հօր  
յայտնութեամբ, որ լքելով իր պաշտած Լէւոնտինը, Արա-  
գածը, Սեւանը, մանաւանդ իր մենաւոր խցիկը՝ ուր մտեր-  
միկ շնչով բազմամիւ հատորներ իր արձուն մտքին լոյս կը  
ձաւալեն, այն մտքին՝ ուր բացի հայցիկ մշակոյթէ՝ գերման  
բարձրագոյն դաստիարակութիւն եւս յորդաբար լոյս սփռած  
է: Այս ամենուն զրկուիլ, ինչո՞ւ, որպէսզի արօտասահմանի  
հայն ալ քիչ մը սփոխանք գտնէ: Երանի՛ այսպիսիներու,  
որոնք շքիդ հմտութիւններով կը ձառայեն հանրութեան:  
Ժողովուրդը նուիրական է. անոր խաւերուն թափանցելու  
համար անհրաժեշտ է մտաւորական քանքար: Այս կերպով  
համար անհրաժեշտ է մտաւորական քանքար: Ո՞րքան ան-  
հանդուրժելի է ամբոխին, երբ՝ անիմաստ կարկանդումնե-  
րով ձեռացած ճամբորտակութիւններու ունկնդիւր կ'ըլլայ,  
մերթ ամբոխավարութեան փաշտատալումներով իբր Թէ

շղաւոր, մերձ ալ խառնակոյտ մը անկազակից խօսե-  
րու, իսկ ամբողջ բեմբախօտութիւնը հիւի հեւ վազք մը  
հեռորական լեզուի սահմաններէն փարսախներով հեռու:

Գարեգին Սրբազան սիրով կը Յափառի աշխարհի  
պնդրտաններուն վրայ, որպէսզի ամենուրեք հայ գաւառնե-  
րուն արբէ խրախմանը, անխոնջ եւ խանդոտ հանդիսա-  
պետ ըլլալով ինք եւ ուր որ ալ ըլլայ ինք կը շահի պերճա-  
խօտութեան յայժմանակը, անոր դաժնեպատկը կը զարդարէ  
իր ալեւորիկ նակատը:

Բայց ի՞նչ արիւթիւն, այդ շրջանին կեանքի՞ սյցի  
ելլել ամէն կողմ, սէրն է անոր յառաջ մղիչն եւ այդ բաւ  
է: Այս առթիւ յիշենք վանական վարդապետի աւանդու-  
թիւն. իբր Յէ Թադէոս Առաքեալ ի սկզբան դժկամակաճ  
ըլլայ առաքելական վիճակին բարբոթեան, առարկելով  
Յէ երկիրն ցուրտ եւ մարդիկ բրտարարք (կոշտ բնաւորու-  
թեամբ) են, բայց յետոյ առանց վարանումի կը փութայ եւ  
կը նահատակուի Արտագու մէջ, ըստ աւանդութեան:

Ի՞նչ է սակայն այս նորանշան առաքելային ուժը, որ  
կը մագնիսացնէ հայութիւն: Հայրենիքի սէր հաւատքի զօ-  
րութեամբ պինդ, գիտակցութեան գերազանցութիւն տրա-  
մարանութեան գրոհներով պաշտպանուած եւ ասոնք զար-  
ժուցիչ ժամացոյցի պէս զուարթագին ընդհուպ կ'արձնցնեն  
հէք գայժախան հայր: Գարեգին Սրբազան, Լուսաւորչի  
շնորհներուն նախարար, ընդունեց Սուրբին այս պատ-  
դամը. «Գնա, Գարեգին, սիրուք, հովուէ, օրհնէ, սիրուի  
գաւակներս»:

Այսպէս հրահանգուած ելաւ արտասահման. իր ըն-  
թացքին՝ իմաստուն խօսքերու ջրվէժ մը առատացնելով, իր  
նուիրական նպատակն է վերաշինել Լուսաւորչի տունը,  
մեր փառքի դարաւոր յիշատակարանը, հայ ստեղծագործ  
հանձարին կոթողը, ներշնչարան մեր հոգիներուն, հիմ-  
նուած Տրդատէն եւ Գրիգորէն, մին հարեմիքի վեհապետ,  
միւսը հոգիներու ինքնակալ, որուն խորհրդանշանն է Ս-  
Մկռտներ, նորածինը մեր հոր հետ լծորդող եւ մենք ուր  
որ ալ ըլլանք մենէ անբաժան է մեր հայրը, աշխարհէ աշ-  
խարհ Յափառական. ի՞նչ անհուն սէր, ի՞նչ բազմ  
նուիրում, հաղորդուիք անոր հոգիով եւ Յող բնաւ չեղ-  
ծուի մեր հարազատութեան կնիքը. ըլլանք նշմարիտ հայ-  
րենասէրներ, չաղարտներ այդ սուրբ զգացումը անիմաստ  
ողորումներով, չըլլանք խաչագողներ: Գարեգին Սրբազան-  
ներու գերբ վսեմ է, սիրելի ընծայել, ինչ որ ազգ կը բու-  
րէ: Երբեմն ի Պոլիս հարց ուղղուած է բազմալսատակ ա-  
չագուրկ ուսուցիչ Համբարկում Երամեանի Յէ խրիմեան  
Հայրիկ ինչո՞ւ այնքան անսահման ժողովրդականութիւն  
շահած է, ի՞նչ եղած է անոր դերը: Վանեցի ուսուցիչը  
սա կարճ պատասխանը տուած է. «Հայրիկ սովրեցող  
միայն նանչնալ եւ սիրել Հայաստան: Ահա իր դերը»:

Այս հաւաստումը կը կրկնուի ահա Գարեգին Սրբա-  
զանի ստանձնած դերով ալ: Նուիրենք անոր մեր սիրուն  
եւ ուխտենք սէր մէկ մէկու եւ գոչենք.

«Բիւր շնորհակալք Ձեզ, Հայր Սրբազան, Գու վա-  
ռեցիր մեր մէջ Արագածի խորհրդաւոր կանդեղ ին լոյսը»

քու սուրբ ձեռքերդ կանգնեցին Սիրոյ սեղան եւ շրթներդ օրհնեցաւ հնչեցուցին երգը հայ վերածնունդին. ի՛նչ սրբ-տագբաւ հովուերգութիւն տառապող հայութեան:

Երկա՛ր կեանք էջմիածնի աւետարեր պնդադեապանիդ:  
«Երանութի՛ւն ողջոյն հայութեան»:

Ս. Գ.

**ԾԱՆՕԹ.**— Գեր. Նուիրահը Լիոնի Հոգեւոր հո-վիւ Տէր Վարդան Ս. ԲՆՆՅ. Ժամկոչեանի ուղեկ-ցուութեամբ Տէսին այցելած է անցեալ տարի Յու-նիս Լին: Այս առթիւ հետաքրքրուած է տեղւոյն «Եկեղեցասէր Տիկնանց Միութեան» ջանքերով բարձրացած կիսաւարտ եկեղեցիի մասին եւ խոս-տացած է հնարաւոր սահմանի մէջ օգտակար ըւ-լաւ նոյն աղօթատեղւոյն աւարտումին:

Այս տեղեկութիւնները մեզ հաղորդած է Տէ-սին բնակող «Ապագայ»ի աշխատակից Պ. Մինաս Ճիհանեան:



Կեանքի նշանարան:

Այս տեղ գործել գործ Աստուծոյ,  
որպէսզի

Այն տեղ հանգչիք հետ Աստուծոյ:

**ՇՆՈՐՀԱԼԻ**

**ՀԱՅ ՄԻՏԲԸ.**— Ամէն բարիք տգիտութենէ կր մտնեն մարդուս միտքը:

— Կոյրը զուրկ է արեւուն ճառագայթներէն. տգէտն ալ զուրկ է կատարեալ կեանքէ:

— Լաւ է կոյր աջքով քան կոյր մտքով:

— Ինչպէս մեծ է հոգին մարմինէն, այսպէս ալ մեծ է մտքին տեսողութիւնը մարմնոյ տեսողու-թիւնէն:

— Եթէ մէկը գերազանցած ըլլայ աշխարհա-կան ճոխութեամբ եւ մտքով շատ աղքատ, այնպի-սին շատերէն աւելի թշուառ է. այս բանը կր տես-նենք ոչ միայն բախարք մարդոց մէջ, այլ ամէնէն մեծին վրայ. Թագաւորը եթէ իմաստութիւնը իրեն անուակից բունենայ, զկրնար իր վիճակին մէջ վա-լելուք ըլլայ:

— Բոլոր մարմնոյն հոգին է կենդանութիւն. իսկ մարմնոյ եւ հոգւոյ կառավարիչն միտքն է.

ԵՂԻՇԷ, Բ.

**ԵՂԻՇԷ,** կրտսերագոյն Թարգմանիչներու կամ երկրորդ աշակերտներու դասէն, Ս. Վարդանայ ա-տենադպիր, հաւանականաբար անոր մերձաւոր ազ-գական: Իր գլուխ գործոցն է պատմութիւնը Ս. Վար-դանանց նուիրում, սրտագբաւ ոճով եւ հայրենա սիրական ոգւով գրուած:

Ահա զոչ մը թեւեր՝ մեզ վերացնող քաղցր յաիշտակութեամբ. մենէ ո՛վ չյիշեալփոխուիր, երբ գեղարուեստի(\*) դուստրը Երաժշտութիւնը իր երգերը կը դաշնակէ: Իրաւունք ունի ղգայսուն գրող մը, երբ կը փառաբանէ Երգը այսպէս. «Հարազատ երգը, երկնային անգիր բանաստեղծութիւնն է, որ կը խանդավառէ գիտունն ու սգէտը: Ան ժողովուրդին հոգիին ձայնն է, որ կը թրթռայ մեր սկանչներուն՝ զմայլելի հաղորդականութեամբ: Հայ ցեղի գոյութեան անմահ փիւնիկը, որ հաղար հաւար անգամներ վերածներ է հայրենիքի ծխացող աւերակներէն, միշտ երգ մը ունեցեր է.— Արցունքի, սիրոյ, հերոսութեան եւ յոյսի երգը:

«Հայ մայրը երգեւտվ սիրեր եւ՝ արցունք թափեր է, հայ զինուորը երգեւտվ մեռնիլ ուզեր է ու հայ պանդուխտները, հեռաւոր գաղութներու մէջ, երգեւտվ պահպաներ են իրենց մէջ հայրենիքի սէրն եւ վերադարձի քաղցրիկ յոյսը, որ հայ պանդուխտին սրտին մէջ եղած է կենսատու բոցը, տաքցընող ազդակը իր հայրենասիրութեան»:

(\*) Գերարուեստի ճիւղերն են բացի երաժշտութենէ՝ նկարչութիւն, քանդակագործութիւն, ձարտարապետութիւն, ձարտարախօսութիւն, բանաստեղծութիւն եւ պար:

Երաժշտութիւնը ոչ միայն բնական էակներու, այլ նոյն իսկ անբան անասուններու վրայ հզորապէս կ'ազդէ, որոնք նուազի սիրահար կը դառնան, ինչպէս բացատրած է Պ. Հրաչեայ Տէր սուի, հեղինակ գիտական հմտակց գրութիւններու՝ կենդանիներու Աշխարհէն վերնագրով գրուածքին մէջ: (Տե՛ս Թէոդիկ «Ամէնուն Տարեցոյց», 1923 էջ 431):

Նոյնպէս երգը շատ անգամ ալ կը նպաստէ անտաւոր հոգիներու բարեւաւումին, ինչպէս Սաւուղի սեւամաղձութեան պարագային, Իււթի տաւիղը անոր հոգեկան յոյզերն ամոքեց: Հին ստեղծմեծ երգիչներ, Որփէոս եւ Ամփիոն (\*) նոյնը կը հաստատեն:

(\*) ՈՐՓԷՆՍ, Թրակացի, որդի իագրոս Թագաւորին կամ ըստ այլոց՝ Ապոլոնի եւ Կլիոյի, հնուՅեան ամենէ մեծ երաժիշտն, որ մասնակցեցաւ Արգուաւորդներու արշաւանքին. այցելեց Եգիպտոս. իր երգերը այնքան մեղամաղձիկ էին, որ վայրի գազաններ անոր ոտքը կը վազէին, իրենց գազանութենէն մերկացած: Անոր կինը Եւրիդիկէ իրենց հարսնիքին օրը կը մեռնի օձ մը խայծուելով՝ Որփէոս դժոխք կ'իջնէ եւ կը հրապուրէ սանդարմետական աստուածութիւններ իր երգին բաղբրութեամբ: Իր կինը իրեն կը վերադարձուի պայմանաւ որ ետեւը չպիտի նայի մինչեւ որ լոյս աշխարհ չիջնէ: Որփէոս հակառակ արգելքին նայեցաւ վերջին անգամ Եւրիդիկէին՝ իր սէրէն մղուած: Այս յանդերձ-

Երաժշտութիւնը կեանքի ամէն անկիւնաքարերուն իբր խորհրդաւոր ոգի կ'ընկերանայ մեզ, մարդ, դեռ նոր ծնած՝ իր օրրանին քով կը դռնէ գուռան մը, մայրիկին է զայն, անոր օրօրով սփտուր կը ծաղկի դէմքին վրայ, մինչեւ որ կ'ըլլայ պատանի, երիտասարդ, եր երգերէն անբաժան կը մընայ, իբր ուսանող, զինուր կամ հանդիտական: Հայ պատմութիւնն ալ մեզ կ'աւանդէ անցեալին երգը, մեր դիւցազն Վահագնի ձօնուած, երկնէր երկին և երկիր, զօր լսած է մեր Խորենացին:

Խնդիր է թէ ո՞րոնք եղած են աշխարհի ամէնէն առաջին երգիչները, այս մասին կ'ենթագրուի թէ գնչուներն իբր թափառաշրջիկ, վաշկատուն ցեղ իրենց յեղյեղուկ բախտը մուսայլը փարատելու

Յինը զարացուց դժոխքին դիքերը, Երիդիկէ կրկին կորուստի դատապարտուեցաւ, որուն համար Որփէոս զգայազիրկ և Թաղձալից՝ հուսկ ուրեմն իբր ուխտադրուծ օշոտուեցաւ դժոխքին բրմուհիներէն:

ԱՄՓինն, մին հին երածիշուներէն և բերձոյններէն, համբաւել որդի Արամազդի և Անդիւպէի, որու համար առասպելներ կ'ըսեն Յէ իր քնարին նարտարուծեամբ և բազր նուագներով ուզածին պէ և պէտքին համեմատ կը շարժէր կը տանէր բարեր. անոնցմով շինած է թէփէ բաղաբը, այսպէս ալ իր քնարով բաղաբաղած է վայրենաբարդ մարդիկը, որովհետեւ երածշունԹիւնը բարբեր կը բաղաբացնէ:

Համար հաղներգներ սարքած են իրենց ընթացքին մէջ. հմտագոյններու անկ է ճշդեւ ստոյգը:

Գալով առողջական տեսակէտին՝ երգելը օգտակար է թոքերու, թէեւ բացառութիւններ կան, զոր. օր. խուչափողի տապէ տառապողներ:

Այսպէս եւ երգելու հետեւանքով խտացի թէնոր Բառուզօ երիտասարդ մեռաւ, ան խնարհ գործաւորի դաւակ, ծնած Նաբոլի, ուր փակեց այժմերը 1921 Օգոստոս 2ին: Գուցէ ուղիւ ըլլայ Եսել թէ այս անգուգական երգիչը իր գործէն մեռաւ: Մահէն ինը ամիս առաջ, երբ կ'երգէր ի Պրուբլին՝ կոկորդին երանը պայթեցաւ և քանի մը օր յետոյ երբ Մամփոն եւ Դաւիթայի վերջին արարին վար քաշեց սիւները, մէկ մասը վրան փլաւ, հակառակ անոր շարունակեց երգել, սակայն վաղորդայնին թոքատապ ունեցաւ և քիչ վերջ ծննդավայրը գնաց, ուր մեռաւ: Բառուզօ փառքի հսկայ մը եղաւ:

Իսկ Պէթովէն ականջատապէ տառապեցաւ և հուսկ իւլացաւ և մեռաւ թոքատապէ:

Թողունք պահ մը բոլոր աշխարհներու փառք եղող մեծ արուեստագէտներ և յեշինք մեր երգիչը, գեղարուեստական տաղանդի չքնաղ յայտնութիւն՝ Կոմիտաս Վարդապետ (\*), դժխեմ՝ ճա.

(\*) Գուրգուրանօր կը պահեմ իր երգերուն բաղբի յիշատակը, ի մասնաւորի վերջինը բազմավաստակ Յակոբ

կտառագրով ցաւատանը, այժմ՝ յաւէտ լուած, բայց ան ներկայ է միշտ իր երգերով, մեր հանդէսներուն փայլը աւելցնելու, մեր երաժիշտներ, երգչուհիներ անոր ստեղծումները կը փոխանցեն մեզ: Եթէ հնար ըլլար պահ մը հեռանալ աշխարհի ժխորէ, երթալ միւրճելու այն լուին առանձնաբանը, տխուր արդեւարան ասարաբախտ վարդապետին՝ անհաղորդ կեանքի խնջոյքներուն եւ մեռնիկ իր զրկումներու տառապանքին մէջ՝ անզօր ոգորոմներով պայքարող մահուան ստուերին հետ, պիտի մտածէինք թէ ան այլ եւս անուն մըն էր միայն, համբաւի թուիչներով թեւաւոր, զառամ երեւոյթով, սարսուզդեցիկ, դաւկահար, աղէտքի փոթորիկներու ցնցումներէն կործանած իբր կաղնին ան եւ թէպէտ գիտութիւնը վաղուց ստորագրած էր անոր մահալծիւնը, բայց ան կ'ապրի եւ պիտի ապրի ցվերջ իր երգերով:

Գրականութիւնն եւս գեղարուեստի հետ զուգընթաց կը հմայէ զմեզ հոյակապ հանձարներով, կուռք մըն է այն եւ մարդկութիւնը անոր երկրպագու: Հին ԵՂՂադան ու Հոռովմ, ինչպէս այժմ՝ Արեւմուտք եւ Ամերիկա կը պաշտեն զայն, դեռ

Գուրգէնի Ռուսչական եւ հասարակական գործունէութեան բառանամայ ֆորելեանին առթիւ 15/28 Դեկտ. 1913ին Բերայի Էսսեան վարժարանին սրահը: Յաջորդ տարին Մե՛ծ Պատերազմը պայծեցաւ, իսկ 1915ին արուեստագէտ հայրը արտրուցաւ: Իսկ 1935 Շոկտ. 21ին վախճանեցաւ ի Վիլիսիֆ, Փարիզ:

չիշեցինք անծանօթ անկիւններ. ինչպէս արաբական, հնդկական աշխարհներ, այս վերջինին մշակոյթին անձուէր, անոր իմաստութեան թափանցելու համար Կարապետ Վ. Շահնազարեան սանկրիտը ուսումնասիրել ուզեց, ինչպէս կ'ըսէ Ե. Տէմիրճիպաշեան: Այսպէս Գրականութեան արձանին առջեւն երկարաձգուած կը տեսնենք հանձարներու փառաւոր տողանցքը, անոնք ներկային սուրբերն են. անոնք մեզ կը նուիրեն մտքին յագուրդ տուող քաղցր արբեցութիւն:

Իմ սիրելի ցեղս հախուսիկ իր տուայտանքներուն հետեւած է այս տիեզերական շարժումին եւ թէպէտ տիտան հանձարներ չէ ծեած հրաշակերտներ արտադրող. բայց միշտ պաշտած է մտքի չընաղ գործեր եւ այսպէս տաղերգելով, մատենագրելով, հասած է մոխչեւ քաներորդ դար:

Արդ, եթէ հայ գեղարուեստը տառապանքներով մոլեգնած իր Կամիտաը կ'ողբայ, նոյնքա՞ր ցաւով հայ գրականութիւնն ալ կ'աւաղէ իր զգայուն գրագէտ, գործիչ Աւետիս Ահարոնեանը կաթուածահար: Այս երկուքը բախտի հեգնանքով եղբայրացած են ֆրոնտալան հողի վրայ: Բայց Արցունքի Հովիտին՝ չեղինակը թերեւս յուսայ դեռ եւս կեանքի արեւը ընդերկար փարտուել, ինչ որ Չերմ իղձն է ընդհանուրին, որովհետեւ քաղցր է մտածել թէ Գիտութիւնը ունի շատ մը անպակնկալներ, իրականացնելու անյոյս կարծուած հեւանդներու կեանքի երազը: Բցի՛ւ:

Երկար կեանք Գրականութեան տիտաններուն:  
Ս. Գ.

Սիրո՛ւն մանկիկ, ես գնում եմ, դու գալիս ես այս  
աշխարհ.

ձշմարիտն ես փորձով գիտեմ ու խօսքերս մի՛ մոռ-  
նար:

Կեանքն է ամպի փախչող ստուեր, վայրկեանն է  
միշտ իրական.

Բախտի կռանը կամքն է Թէեւ, բայց դիպուածն է  
տիրական:

Ջգացումն է գերիշխանը, խելքը՝ նրա լոկ ծառան.  
Բայց դո՛ւ խելքդ վրա՛դ պահիր, ինչպէս սրդպատ,  
կուռ վահան:

Մի՛ հաւատար ստուերներին, յենուիր միայն քեզ  
վրա,

Ատելու ջա՛փ սիրիւ մարդկանց, բայց լաւութիւն  
մի՛շտ արա:

Եւ լայն օրում Թէ՛ ընկերներ, Թէ՛ բարեկամ Պանա-  
չիւր,

Իսկ նեղ օրում ընկերների ո՛չ որոնիր. ո՛չ կանչիր:

Խաղերով լի այս աշխարհում խաչըդ եթէ տա-  
նուլ տաս,

Ջուա՛րթ եղիր, ու այդպէսով բախտի վրա կը խըն-  
դաս:

Անվախ ու վեհ դե՛կըդ վարէ անձանթիւն դէմ-  
դէմի,

Անզղջալի առա՛ջ գնա, ինչ որ լինի, Թո՛ղ լինի:

Լտի՛ր, տղաս, ինձ կը Թաղես անյայտ մի տեղ, ան-  
նշան,

Որ չիմանան. մարդիկ չգան՝ շիրմիս քարը գողա-  
նան:

#### Ա. Իսահակեան

ԵՐԿՈՒ ՏՈՂ.— Փարիզ հայ մտաւորականութեան  
կեդրոն ձեւացած է, հայ գրագէտ, հայ բանաստեղծ, կամ  
գիտուն շատ ու շատ, ամէնքն ալ պաշտելի, ամէնքն ալ  
քաղցր, ազգին սէր եւ հրճուանք: Որչափ յանկուցիչ է  
այս համաստեղութիւնը դիտել զմայլումով եւ ազգակիցներ  
փոռորիկներէ զարհուրագին փախչող հաւերու պէս ապաս-  
տանած այս Լոյս-Քաղաքը անոնցմով կը սփոփուին: Աւե-  
տիք Իսահակեան անոնց մէջ գեղեցկալոյս ջահ մըն է:  
Թերթերը գրեցին Թէ անոր վաճառմամբ կը լրացաւ անց-  
եալ տարի եւ ես այս բացազանչութիւնը կ'արձակեմ. Ո՛վ  
տաքիններ, փախչող տաքիներ, ձեզ պահեցէք ալեւոյթի  
սառնամանիք եւ անվերջ պարգևեցէք քսաներորդ դարու  
այս վերապրած Գողման Երգիչին դեռ շատ երկար տա-  
քիներով գարունի կեանք:



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

(Պատմական ճշդում)

Անցեալ տարի Տարեցոյցս այս պատկերի հեղինակի մասին հարց ուղղած էր զայն յղացողին ինքնուրուինը յայտնելու, որովհետեւ ղժբախտաբար հին ղէմքեր հետգհետէ կ'անհետանան, որով ղժուար է գիտակիցներ գտնել, հակառակ որ շատ մը անօգուտ ղիմումներ կատարեցի եւ յուսախար եղայ. բայց ուրախ եմ որ ազնուական անձնաւորութիւն մը, Պ. Արմենակ Սագրը ինքնաբերաբար լուծեց

այս գորդեան հանգոյցը իր 19 Յունուար նամակով յայտնելով թէ իր բարեյիշատակ հայրն ճշդած է նոյն պատկերին հեղինակն՝ որ է Փարիզու Մուրատեան վարժարանի գծագրութեան ուսուցիչ իտալացի Ֆանտլին:

Հայրը, Յովհաննէս Սագրը աշակերտած է Մուրատեան վարժարանին 1846էն 1852:

Ուրախութեամբ ընդունելով այս հաւաստումը, ներուի ինձ սակայն վերագրել զայն հայ միտքին, որչափ որ իտալացի արուեստագէտը յօրինած է պատկերը, անոր թելադրիչը հայ ոգին եղած կը համարիմ, ըստ որում ազգային զգացումի յորդում կը նախատեսուի սոյն պատկերացումին մէջ, ինչ որ օտարի մը համար աննշանակ է: Ուրեմն նախկին Մուրատեան վարժարանի վերատեսչութիւնը, գիտակից ուսումնասպերճ Մխիթարեան Հայրերէ կազմուած, ներշնչած են իրենց վարժարանի իտալացի գծագրիչին պատրաստել նոյն պատկերը, մանաւանդ Գարրիէլ Արքեպիսկ Այվազեան, որ նոյն ատեն վարիչ հայրերէն էր:

Շնորհակալութիւն Փարիզեան հայ տարագիր Պ. Արմենակ Սագրի, որուն հաճոյքն է հնագիտական հմտալից ուսումնասիրութեանց գրադում, որոնց հրատարակութեամբ պատուոյ տեղ գրաւած է ոչ միայն հայ ու օտար մամուլին մէջ, ընդհանուր գնահատման արժանանալով: Անոր գործն է պարս-

կան մանրանկարչութիւն ու ֆրանսական հանդէսներու մէջ յօդուածներ արեւելեան արուեստին վերայ, միշտ հետաքրքրութիւն կ'արթնցնեն բանասիրական աշխարհին մէջ:

Ս. Գ.

ՄԱՆՕԹ.— Բաղըր էր ինձ այս հատուածին կցել Պ. Արմենակ Սաղբղի պատուական հօր Յովհաննէս Փաշայի հակիրճ կենսագրակա՛ր. բայց արդէն Անահիտն Չօպանեանի (1934) եւ պատմագէտ միլիթարիան Շ. Սահակ Տէր Մովսէսեան (1908) տուած են անհրաժեշտ մանրամասնութիւններ այս մասին, որով այդ հանոյքէն զբկեցի գիս, իմ կողմէ եւս խոնարհ յարգանք մը ընծայելու Յովհ. Փաշա Սաղբղի յիշատակին:

Ս. Գ.

ՕՏԱՐ ՄԻՏՔԵՐ.— Ազգի մը համար ամենէն վտանգւոր վայրկեանն այն է, որ ան կը կարծէ իր իտէպլին հասած ըլլալ:

### *Ինչնէստ Ռընան*

— Ժողովուրդներու շողորոթներ Թագաւորները շողորոթներուն պէս վտանգաւոր են:

### *Շաղապրիան*

— Ոչինչ աւելի կը յիշեցնէ մարդկային հոգին, որքան մեղուն, որ ծաղկէ ճաղիկ կ'երթայ, ժողվելով մեղր, ինչպէս հոգին՝ ասուղէ ասուղ, ժողվելով լոյս:

Վ. Հիււկո

## ԱՆՄՈՌՈՒԿԻ ՄԻԼ Մ Ը

*Չօն՝ Յորբելեար Պ. Ե. Տ. Անդրէասեանի՝  
իր ծերօն բարեկամէն.*

Ի՛նչ է այս Յորբելեան. — Մտաւոր սղատիռնի մը յարթական վազքէն վերջ քաղցր հանգրուան, ուր կը մեծարուի Պ. Երուանդ քաջահմուտ ուսուցիչն եւ մամուլի վաստակաւորն: Այս կրկնակ դերերով ինք շահած է իրաւունք հանրային գնահատումի եւ այս՝ հզօր ապացոյց է այն գիտակցութեան թէ հանրութիւնը իր հոգիին խորը կանգնած կապիտուլին վրայ կը բարձրացնէ ազգային դրօշրութեանց մշակներ փառքի դափնիներով պսակաւոր:

Պ. Երուանդ տարիներով մեր մատաղ սերունդին նուիրեց մարգարիտներ մեր մեծասքանչ լեզուին, միեւնոյն ատեն սլացաւ գրչի ասպարէզը, ուր իբր երկասէր մեղու անուշակ մեղրով լեցուց լրագրական փեթակին բջիջները, երբեմն ալ իբր նոյն միջատազգի խայթոց գործածեց յանուն քննադատութեան. գրիչը անոնց ձեռքին մէջ պայքարի զէնք մըն է, նկարագրի պահանջք. բայց գաղափարի հակառակութիւնը ատելութիւն չնշանակեր. րստ այնմ վարուած է Պ. Երուանդ, այո՛, պայքարած է նոյն իսկ իր գիւղացի Շ. Արսէն Ղազիկեանի հետ, բայց յետոյ անոր վախճանումէն վերջ անոր

յիշատակին նուիրած է սրտագրաւ տողեր. որովհետեւ իր խմորը բարի է, ասով յետս կոչում ըրած է իր առջի գրածին, նոյնպէս անկեղծ եւ իբր այն սիրելի ամենուն. իր զայրոյթը վաղանցիկ է, յանկարծ կ'ըլլայ ժպտուն եւ շէնշող, նոյնպէս հմայիչ իր ծննդավայրի սեփական հագագային եղանակաւոր երկարումներու երաժշտականութեամբ. բաց աստի, տաղանդաւոր, որով կրցաւ սիրոյ շրջանակ մը գծել Փարիզեան շատ իրերամեքո՞ստանին մէջ, եղաւ դիւրամատոյց մտաւորական մը:

Եւ ես որ վաղուց եղած եմ մեր գրական շարժումին հետեւող, կարգացած եմ կանուխէն «Ա. Մամլոյ» 1905 Դեկտ. 14ի Թիւին մէջ նոյն պարբերակներէի Պոլտոյ Թղթակից *Վաղինակի* գնահատականը բնորոշող մեր Յորեկարը ձեռնհաս ուսուցիչ եւ հրապարակագիր: Անկէ ի վեր 30 տարիներ սահած են եւ Վաղինակի վկայութիւնը միշտ Թարմ, միշտ վաւերական՝ կը նոյնանայ «Ազգարար»ի խրմբագրապետ Պ. Մանուկ Արսլանեանի խմբագրականին հետ՝ *Հարկա Հաթկաւորաց*, պատիւս ըստ *արժանեաց*, Ս. Իրքին պատգամ:

Այս պահուն կը խորցիմ Թէ այս Յորեկանի ծափն ու դրուատիք Պ. Երուանդը փառաւորելով հանդերձ, անոր աղբիւրին ալ կ'ուղղուին, այն է անմտականալի Դուրեանի, այն ինամտ պարտիզականին՝ Պարտիզակը բուրաստանի վերածող, իրմով գեղազարբ ամուններով պմտուած, այն անժան հոգիին՝

որ այժմ արդարներու լուսեղէն դասին դասակից, Ֆակատն աղեղնուած սուրբի շողաւոր պակով իր անուշ ժպիտը իբր հեգնանք կ'արծակէ մեր անուղիղ դատումներուն՝ իր եզական ետ որպէս քանքարանքարոյց վճռող մեր սագտանքի շնջիւններուն: Երջանիկ հոգի, ներք մեզ, քու դերդ փառաւորուած է, որովհետեւ դուն շատ պարզուկ շինական Երուանդներ ոստանիկ հանդիսացուցիր ԱԹե. նարոյր այն գիւղակին մէջ, այժմ լքուն եւ ամայի, Ս. Մինասի բարձունքով հովանաւոր, հոն մատաղ սերունդի մը հոգիներուն մէջ հայ մշակոյթի սաղմը ստեղծագործեցիր, այնպէս որ ամենուն համար Պարտիզակը նախանձելի եղաւ եւ հեռաւոր մը գոչեց անձկանօք, *երանի Թէ Պարտիզակցի ըլլայի*:

Թող հովիկն Փարիզեան՝ իր Թաղուն Թեւերով տանի մեր խանդավառ շնորհաւորութիւններու արձագանգն ի Պարտիզակ, Բիւթանական այն դրախտավայրը, ուր վառ կարմիր կեռասներով զարդարուն ծառերուն տակ կը ննջեն յաւիտենական քնով յարգելի Յորեկարին ծնողքը, պապիկն եւ հան, սրբատուն Տէր Անդրէաս Հայրը՝ որոնց հոգիները իրենց երկնային կայքէն օրհնութիւն կը տեղան իրենց սիրեցեալ որդւոյն, Թոռան եւ Թոռնորդւոյն Պ. Երուանդի, մինչ մենք կը գոչենք. երկար կեանք հայ մշակոյթի քաջալանջ ախոյեանիդ, սիրեցեալ Պ. Երուանդ. քեզ մշտաւորդ ալեւոյթ:

Ս. Գ.

## Ս. ՄԵՍՐՈՊԻ ՅԻՄԱՍԱԿԻՆ

Տխուր է Սուրբը... Թախիծը դէմքին,  
Ծնրադիր ու լուռ, Աստուծուն դիմում,  
Աշխարհին լքած սին ու դառնագին,  
Յորդարորը խանդով աղօթք է անում:

Միտքը վերացած ողջ վայելքներից  
Սառառնում է դէպ երկինք անսահման,  
Զի հրաժարուել իր մեծ յոյսերից,  
Անոնց Թափ կուտայ հրսկայի նրման:

Աղօթք է անում հոգևով երկիրդած,  
Պարզում է վիշտը սրտի խորքերի,  
Իր դէմքը հեզիկ երկինք դարձուցած՝  
Նեկտարն է ձուռն իր վառ տենչերի:

Յանկարծ, ո՛վ հրբաշք, տեսիլ եզական,  
Աստուծուն Աջն է Սուրբին երեսում,  
Ու մէկիկ մէկիկ տառեր հայկական  
Տեսնում է Մեսրոպ խինդով անպատում:

ՍԹափում է մեր Սուրբը պաշտելի,  
Կարծես խոր Թմբիր իրմէ Թօժափած,  
Խայտայ հրբաշքովն հայկեան տառերի,  
Իր բաղձանք պսակած է բարին Աստուած:

Բիւր երանի քեզ, հայ մտքի տիտան,  
Քու անմահ փառքիդ հազար ու քիւր տաղ,

Քեզմով խանդավառ հայն ու Հայաստան՝  
Կը պաշտէ ըզքեզ երջանիկ ուրախ:

Յարգանք անմոռաց քու յիշատակիդ.  
Առաջնորդ լուսոյ, ո՛վ Սուրբ Տարօնի,  
Մեսրոպ դու հայուն սէր, հրճուանք, ժրպիտ,  
Համբոյր քու շիրմիդ, պարձանքդ հայրենի:

*Զանի Տէր Գարեգին*

Կալկաթա

28 Մայիս 1935

ՄԱՆՕԹ. — Սոյն Տաղիկը գրագէտ հոր մը, Կալկաթայի վիճակաւոր Տէր Գարեգին Ա. Քահանայի որդւոյն ձօնն է Ս. Մեսրոպի յիշատակին: Գրերու գիտին քաղցը զրոյսը ներշնչած է նոր աւիւն տոյն պատանուոյն՝ որ ներկայիս կ'աշակերտի անգղ. վարժարանին ի Կալկաթա. բայց սիրած է հայ լեզուի մշակոյթ եւ սիրուն տաղեր նուիրած է Պարսկահայ մամուլին («Վերածնունդ», «Բորոխ») եւ ահա ճարեցոյցիս մէջ ալ իր բերթողական անուշ դաշխայիկը կ'արձակէ Հիմալայայի ստորոտէն, հայ մուսայէն ներշնչուած: Հաճոյքով կը ներկայացնենք զինքը իբր օրինակ նոր սերունդին:

Ս. Գ.

ՕՏԱՐ ՄԻՏՔԵՐ. — Պարագաններ կան՝ ուր ողջամիտ ըլլալ, վատ ըլլալ է:

— Աւանդուածներ չէ ինչ որ մեռեալ է. այլ այն՝ որ կ'ապրի, այն՝ որ կը վերապրի:

*Պրիւնդեա*

**ԳԻՏԵԼԻՔ.**— Թերեւս աւելորդ չբլլայ այս գեղեցիկ քերթուածին կցել Հայ գրերու գիւտի մասին պատմական ճշգրիտ վկայութիւններ: Գիտենք թէ մեր նորոհաս բանաստեղծը միակը չէ որ հրաշքի վերագրէ Հայ գրերու գիւտը, իր մասճոճն այսպէս ներքեւ է իր ստեղծագործ հանճարին, չէ որ իրմէ տուաջ շատերու քաղցր եղած է հրաշքի քողով պարուրել Մեսրոպի, իբր ազգային վերածնունդի վերանորոգիչի, գիւտը Հայ նշանագիրներու, ինչպէս որ աւանդած է մեր պատմահայրն, ըսելով թէ երբ Մեսրոպ իր Զանքերէն չօգտուեցաւ, աղօթքի ապուինեցաւ «եւ տեսանէ ոչ ի քուն երազ եւ ոչ յարթութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանին երեւութացիալ հոգւոյն աչաց թաթ ձեւին աջոյ գրելով ի վերայ վիմի, Ա., Ե., Է., Ը., Ի., Ո., Ի. (Սորեն. Գ. էջ 497):

Հայ գրերուն գիւտը կը պատմեն Ս. Մաշտոցի աշակերտ Կորիւն եւ Զազար Փարպեցի: Երկուքն ալ կը յայտարարեն թէ Մաշտոց իր աշխատութեան եւ Զանքերուն շնորհիւ կրցաւ իր լեզուն անսայթաք արտաբերող նշանագիրները հեղինակել, զոր պէտք է համարել հրաշքի արդիւնք:

— «Ժամանակակից պատմչաց սկնարկութիւններ այս մասին որչափ որ մտթ ցոյց տան ըստ բաւականին թէ Հայք յառաջագոյն քան զՄեսրոպ, չէին զուրկի զբոյ, որ դժուարութեան եւ թերութեան պատճառաւ կամ թերեւս ուրիշ նկատմամբ

էր բուրովին կամ ըստ մասին խափանուած, ուստի Մեսրոպայ պարծանքն այն եղաւ որ հին այբուբենական գրութեան, ինչ եւ էր այն, թերութիւնը լցուց եւ դժուարութիւնը վերցնելով տուաւ ազգին դիւրին եւ կատարեալ այբուբեն ըստ նմանութեան եւ ոճոյ յունարէն ակիաբետաց: Մեր պատմիչը չյիշելով այս կէտը կամ չհամարելով կարեւոր, կը ցուցնեն այնպէս որ չեթէ յառաջ քան զՄեսրոպ չկար ամենեւին դեր եւ զՄեսրոպ կ'ընեն զԿարմոս Հայոց, այսինքն գտակ նշանագրաց, ոմանք (այսինքն Սորենացին) կը նշանակեն գիւտը նաեւ քթանչելեօք, թէպէտ նախամեսրոպեան դեր եւս կ'ակնարկեն գէթ ընդ աղօտ»:

Ա. Մ. Գարագաշեան, «Մաղիկ Մանկանց»  
Խմբ. Մ. Ասքանազ

Իսկ Օրժանեան իր «Հայ Եկեղեցւոյն» մէջ (էջ 49). «Որովհետեւ Ս. Մեսրոպ իր նպատակին մէջ յաջողեւու համար աղօթքով ալ դիմած էր երկնային օգնութեան, անոր յաջողութիւնն ալ աստուածային սքանչելեաց արդիւնք ընդունուեցաւ»: Առանց որոշակի ըսելու թէ գրերու գիւտը հրաշքի արդիւնք է:

\* \* \* Մեսրոպայ բուն անունը յայտնի չէ. այս երկու անուանք, Մեսրոպ եւ Մաշթոց, կը թուին լինել պատուանուն, մին յաշխարհականութեան նորա, այն է Մեսրոպ, որ է պարսիկ բառ եւ կը նշանակէ քարտուղար, եւ հաւանականապէս տրուած

է նմա իր առաջին պաշտօնին համեմատ, (Տե՛ս «Կորին») 6, Խոր. Գ. Խէ, Փարս. Ժ. Դ.:

Իսկ միւսն, Մաշթոց, է ի յոյն բառէն Մաս-դո՛ս, որ կը նշանակէ բարձրութիւն, ուստի եւ պատ-ուանուն եկեղեցական, որպէ՛ս մեր այժմու Գերա-պատիւ կամ Գերյարգելի տիտղոսք զորս տամք բարձրագոյն կարգի եկեղեցականաց, կամ որպէ՛ս եւրոպացւոցն éminence, eminenza (լատ. eminentin), տիտղոս աւագ եկեղեցականաց: Մաշթոց անունը թերեւս տրուեցաւ նմա ի Յունաց, ինչպէս եւ ի Յունաց տրուած էր նման Ակուսիտ անուն (Կոր. 16) որ էր տիտղոս կարգի անուանի վանականաց: Կորին կուտայ նմա համակ եկեղեցական տիտղոսք Մաշթոց, Խորենացին կը կոչէ զնա միշտ աշխարհական տիտղոսո՛վ, Մերսոպ, բաց ի մի անգամէն, Մաշտոց, որ ուղղագոյն է ըստ օրինի տառագար-չութեան: Փարսեցին ունի խառն»:

«Մաղիկ Մանկանց» Ա. Մ. Գարագաշեան

**ՃՇՏՈՒՄ.**— Պ. Տիրան Թէքէեան՝ որ իր հոյա-կապ ուսումնասիրութեամբ պանծացուցած է յիշա-տակն հայազգի արուեստագէտ Ալթունեանի, որու մասին անցեալ տարուոյ Տարեցոյցիս մէջ գրուածին մը նօսիրելով օգտուեցայ նոյնէն, երկտողով մը մատ-նանշած է երկու կարեւոր վրիպակներ, մեր հրա-տարակութեան մէջ սպրդած: Մին է ծննդեան Թուա-կանք փոխանակ 1739ի պէտք է ըլլայ 1839, միւսն է Ալթունեանի հայրը Մարտիլիա եկած չէ, ինչպէս գրուած էր:

Հայրենի յուշեր:

## Ս. ԱՍՏՈՒՍԱՍՏԱՅ ՎԱՆՔԸ Ի ԶԵՅՈՒՆ

Ձէյթուն... Ո՛վ իմ պաշտելի ճննդավաքս, դուն այժմ բարութեամբ, բայց բու պատկերդ երեւակայութեան առջեւ անցինք դրոշմուած՝ բնա չէ եղծուած եւ միշտ կարօտի դառն արցունք կը բամէ աչքերս. երբեմն իրը կարեւորագոյն վայր հոչակ ունէիր Զահան գետի լեռնահովտին մէջ դիրք բռնած, ո՛վ բաջակորով դիւցազներու բոյն, լեռներու մէջ հաստատուած աւան բառակուսի ձեռով, որուն մուտքը ան-ձուկ ձորակներով եւ դժուարակիտ ուղիներով եւ այսպէս բնական ամրութիւններով անտառի պարիսպներով ապա-հովուած:

Ձէյթուն, ճովուն մակերեսէն 3500 ոտք բարձր լեռնա-յին երկիր, հայկական Գարատաշն էր, շրջապատուած բարձրաբերձ լեռներով, որոնցմէ բարձրագագամ Պերդիկկա լեռան կողին վրայ է Ս. Աստուածածնայ վանքը, որ կը պահուէր Անանիա առաքելոյն Ս. Աջը: Վանքին մօտիկ է Փայթնց աղբիւրը սառնորակ, առատ եւ մարսեցուցիչ ջու-րով: Այս մեծաստան իր պահպան հրեշտակ կը հսկէր Ձէյթունի, ազատասէր բաշորդիներու արճուերոյնին, զոր եր-գած է անմահն ՊէշիկՊաշիեան. ո՛վ չգիտեր անոր՝ բաշոր-դին տալը. «Ի՞նչ զով խնդրես, մայր իմ անուշը»:

Ձէյթունցիներու սխրագործութիւնները յաւերժական փառք են անոնց, յաճախ իրենցմէ աւելի ստուարածիւ-ծնամի բանակներ ամօժայի պարտութեան մատնած: Ո-

բովհետեւ Զէյթունցիին անբաժան ընկերն է հրացան, սուր, ատրճանակ, որոնց ընտիր երկամբ կը մատակարարեն իրեն Պէրիտ լեռան հանրերը: Իր պայքարներուն մասնակից է փախուկ սեռն ալ, իբր քաշարի ամազոն. անոնցմէ կ'արժէ յիշել հնազոյն օրինակ մը Ռուբինեանց Զեթուն՝ սպարապետին Տիկիւր Զարմանուհին, Զէյթունցի, որ իր ամուսնոյն ընկերացած՝ Էգիպտոսցիներու դէմ յարձանակներ շահած է, մինչեւ իսկ Սուլթանին տղան գերի վարած. Եւեւ իր գերեզմանը չգիտցուիք Յէ ո՛ր է, բայց այս հերոսուհին չէ մոռցուած, անոր ի յիշատակ Զարման անունով կը կոչուին Զէյթունցի շատ աղջիկներ:

Սակայն ո՛րքան հմայիչ էր Ս. Աստուածածնայ տօնը այս լեռնական հսկայորդիներուն համար: Տօնն երկու օր առաջ բոլոր Զէյթուն կը դատարկուէր: Բարեպաշտ ժողովուրդը, իր նախահայրերու կրօնին անձուէր, անոնց սրբազան աւանդութիւններուն սիրահար, խմբովին վանք կը բարձրանար, որ մէկ ժամու հեռաւորութիւն ունին: Նոյնպէս հեռաւոր տեղերէ, Գամասկոսէ, Պէյրութէ, Հալեպէ, Այն-Սապէ, Էլպիստանէ, Կոկիստնէ, Սարաշէ շաբաթներ առաջ գունդաբաշտ հոն ուխտի կը փութային, մեր չքնուր ընաշխարհի դրախտաման վայրերը վայելելու, զանոնք բուրմնաւտող անմահ ծաղիկներով յափշտակուելու, անոր օգով, ջրով կազդուրուելու եւ տեղոյն հանքային ջրերով քայքայուած ֆիզիքականներ զօրացնելու. որով այդ սրբավայրը ոչ միայն հոգեւոր շնորհներ կը բաշխէր, այլ եւ առիթ կ'ընծայէր մարմնեղէն բաշտողութեան սատարելու: Վանքը իր խցիկներով հազիւ բաւարարութիւն կուտար

Տրատացեալներու խուժումին, Եւեւ վանական վարչութիւնը իր լաւագոյնը կ'ընէր ժողովուրդի հանգստին. սրբտարուխ նուէրներ կը տեղային ծովածաւալ ամբիւնն, հընչուն դրամ, եկեղեցական անօթ եւ զանազան սպասներ. ամէն սիրտ կը բարբախէր վանքի մշտատու պայծառութեան համար, ի՛նչ ոգեւորիչ էր տօնական եռուկերը. մարդկային ալիքը կը ծածկէր ամէն կողմ: Առաջնորդ Սրբազանը իր պատշգամէն կ'օրհնէր ուխտաւոր ժողովուրդը, մինչ վաբր բակին մէջ պտղավաճառներ իրենց զուարթ գոչիւններով ամբոխը աւելի կ'ոգեւորէին, մեծ շահ մը ապահովելով Զէյթունի տեսակաւոր համեղ պտուղներու վաճառումին, գունակ գունակ խաղողներէ, որոնց մէջ Սագաւորի խաղող կոչուածը գերազանց էր, հատիկները ընկուզի մեծութեամբ, նոյնպէս բազմատեսակ խնձորներէ, հաւկթի չափ սալորներէ, ելյն. ելյն.:

Տիրող ժխորը կը կրկնապատկէր, հրացանածգութիւն, նշան բաղլըր ազատութեան, ընդհանուր խրախմածք, երգ ու պար, ուրախութիւն, որ կը տեւէր ժամբրով:

Տօնին նախընթաց իրիկուընէ արդրէ, սրտպատէ եւ ընկուզ տախտակէ շինուած երեք զանգակներու ղողանջով կ'արձագանգէր՝ հրաւեր ժողովուրդին եկեղեցի ժամերգութեան համար, իսկ կիւրակէ առտուն շատ կանուխ գանգակահարութեան: Ընդոտ արքանցած հարստացեալներ խուռներամ կը փութային դէպի Ս. Տանար, որ այդ օր կարծես տարբեր հմայք ունէր, շահերով լուսաշող գերբնական երեւոյթ մը կը պարզէր խունկներու անուշահոտութիւններով օճուռ, երգեցիկ մանուկներու սրբասացութեանց գեղգեղանքը

կը վերացնէր հոգին. այդ պահուն Բարին Աստուած ուխտադիր ամբոխին ալերաներուն ունկնդիր՝ իր շտրհներու խոստումով կարծես կը սրտապնդէր՝ զամենք: Միջօրէին կ'աւարտէր եպիսկոպոսական պատարագը եւ եկեղեցական Թափօրին դուրս ելնելուն՝ մատաղի ոչխարներ կը մորՊուէին աղբատներու բաժին, մաս մըն ալ վանական սեղանին: Պատարագիչ Սրբազանը զգեստաւոր կը յառաջանար խաչով, Աւետարանով, խաչվառներով վանքին առջեւ, կ'օրհնէր ոսկեհատիկ խաղողը եւ անդաստանէ վերջ, պահպանելով կը ցրուէր ժողովուրդը:

Յետոյ ուխտաւորներ իրենց ուտելիքներով կ'երթային աղբիւրներու, ջրվէժներու մօտ կամ մեծ սօսիին հովանիին տակ սեղան սարքած կը զուարճանային մինչև երեկոյ, ուրկէ վերջ վանքին առջեւի հսկայ բնկուզնիին մօտ հիւսիկներով եւ շողշողուն հագուստներով կ'եսարացի լարախաղացներ «Ո՛վ Սուրբ կարապետ» շօնով տեսակ տեսակ զարմանազան խաղեր կը հանդիսացնէին, որտընդոտ ծափերու արժանանալով:

Յաջորդ օր, Մեռելոց, ուխտաւորներ քաղաքին չորս եկեղեցիներուն Հոգեհանգիստին ներկայ կ'ըլլաին, վերջը դարձեալ բացօթեայ զուարճութիւն, անմեղ կազդուրիչ վաշիք:

Նոյն օր երեկոյին ուխտաւորներ վանքին օժպտոյտ ծամբանքէն կը դառնային մեկնատան, ուր քանի մը օր հանգիստէ վերջ կը մեկնէին Ս. Փրկիչ դէպի ջերմուկներ եւ կը հեռանային իրենց տեղեր, քնոցը յիշատակներ տանելով իրենց հետ:

Ո՛վ քաղցր անցեալի պատկեր, կարող չեմ դիտել զբեկ, կը փղձկիմ, եւ արցունքի շիթեր կը վարագուրեն տեսութիւնս, նոյնպէս կ'զգամ թէ անգոր եմ վարպետի վրձնով ուրուագծել զքեզ. չունիմ ձեռքիս տակ հօր նկարչի երանգապնակ, բայց ծայն մը գիս կ'ողեւորլ եւ կ'որոտայ այսպէս, քաջալերուէ, զաւակը Զէյթունի, գաղութի կեանքով եւ պիտի տեսնես որ Հայրենիքի բաշերը սողանցր պիտի կատարեն հրեշտակի Յուլիներով աշխարհի չորս ճայրերէն սուրալով դէպի Զէյթուն, անոր գերեզմանի կափարիչ վեմը Յաւալելու, իսկ քու հոգիդ անոնցմէ անբաժան, խոնարհ երկդ, այժմ զոյգ սրբազնագոյն կիլիկիան հովուապետներու հովանիով հպարտ, Սուրբոյ մէկ անկիւնը ի Հոմս, քու անմոռանալի նահատակ եղբայրներուդ եւ բոլորերուդ յիշատակին նուիրէ խոնկ եւ աղօթք եւ կրկն. միշտ ետանդագին.

Ո՛վ իմ Զէյթուն, կորսուած դրախտ, լքուած բուրաստան չես դու, այլ կուգայ որ երբ պիտի ծաղկիս մշտութեամբ, քու բազմամիւ զաւակներովդ երջանիկ, պիտի ծափողջուես Աստուածային արդարութեան յաղթանակը հայուն ազատութեան պարգեւով:

*Աղօթարար*

*ՄԱՇՏՈՅ ԲՅՆՅ. ՈՍԿԵՐԻՉԵԱՆ*

18 Օգոստոս 1935

Ի Տօնի Ս. Աստուածածնայ

Հոմս (Սուրիա)



*Տ. ՄԱՏՏՈՅՔԻՆՅ.*  
*ԵՄՄԿՈՉԵԱՆ,* ծնած  
 1888ին, ուսումն ստացած  
 տեղոյն բարձր. կրթա-  
 րանն, յետոյ Սոյ ժա-  
 ոանգաւորացին աշակեր-  
 տած, մկ տարի Տարածի  
 Ամերիկեան Գոլէճին:

1910-30 ուսուցչական  
 պաշտօն վարած զանազան  
 տեղեր, ինչպէս Զէյթուն,  
 Հիւսարբք (Պիլէճիկ), Լ-

տիրնէ, Բօր-Սալիտ, Մերսին եւ Հալէպ, վկայուած Կ-  
 Պոլսոյ Ուսումն. Խորհուրդէն:

Աշխատակցած է զանազան ճաշկանուէներով մերեք-  
 րու. ունեցած է առանձին հրատարակութիւններ հայրենա-  
 սիրական նիւթերու վրայ գրաւիչ ոճով: Վերջապէս իր մէջ  
 հոգեւորական կոչում զգալով քահանայացած է Հալէպի  
 Առաջնորդ Արտաւազդ Արքեպիս.ի ձեռամբ, 1930 Սեպտ:  
 14ին Խաչվերացի տօնին, Հալէպի Ս. Քառասուն Ման-  
 կանց եկեղեցիին մէջ. անկէ ի վեր կը ծառայէ ժողովուր-  
 դին Հոմսի եւ շրջակայցի հոգեւոր հովուի եւ տեղոյն  
 վարժարանաց տնօրէնի կրկնակ պաշտօններով, զոհուա-  
 կութիւն պատճառելով իր հօտին. իր օգտաշատ պաշտօնա-  
 վարութիւնը վարձատրուած է Առաջ. ֆոխանորդի Իշխա-  
 նութեան բարձրացումով:

**ԱՌ ՅՈՐԵԼԵԱՐ**

*Տէր Հմայեակ Աւագ Քչնոյ Էջտերճեան*

*Ս. Խաչ Եկեղեցւոյ Բուկիւտարի*

20 Ն

Կէս դար է ճիշդ. որ դասատու  
 էիր մատաղ մանուկներու.  
 եւ աւանդած դասերդ ա՛նքան  
 նառ՝ օգտուէտ, գրաւիչ եղան,  
 Զի ամէն կողմ կը լսուէին՝  
 Թէ՛ մայրննի դու մեր լեզուին  
 Ուսման սէրը, բեւեռի (\*) պէս  
 կը գամէիր սիրտերէն ներս  
 Աշկերաներուդ, որոնք իրա՛ւ.  
 Ըզբեզ բրին բարեհամբու:

եւ քանինն՛ր երամովին  
 Քեզմէ պիտի դու սովորէին,  
 երբ դուն յա՛նկարձ վախաբեցար  
 եկեղեցւոյդ սպասարար  
 Օծուիլ, նաև Ս. Ղեւոնդեանց  
 Անուանակցիլ, զի անմուսց

(\*) . Ակնարկութիւն Տէր Հօր մականունին:

Պահուի անոնց վեկ յիշատակ՝  
Որ հայուծեան է Հմայեակ (\*):

✕

Եւ ահա այժմ դու քահանայ՝  
Երբ կոչումիդ քառանամակեայ  
Լուրջ շրջանը կը բուրբեա,  
Անկեղծ ոգեով կը յայտնեմ եւ  
Թէ բեղմնաւոր դու զայն բրիր  
Մաքուր կեանքով մ'եւ անբասիր.  
Ու տքնեցար տխւ եւ գիշեր  
Պատրաստելու համար էջեր՝  
Հայկազունի մեր պատմութեան,  
Որ պահանջէ արդ՝ անպայման՝  
Քեզի նման վաստակաւոր  
Գրակրկիտ բանասէրներ:

✕

Կեանքի գիշերն հեռու է դեռ  
Քեզմէ, Տէր Հայր, ո՛ր ն անվեհեր  
Շարունակէ՛, ինչպէս կէս դար  
Մինչեւ այսօր չը դադրեցար,  
Մեր գրական աղքատ ամուսն  
Զանալ առնել քաղմարեղուն:

*Տօքթ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ*

Փարիզ, 1935 Յուլիս

(\*) . Յորեկեար Տէր Հօր անունին իբրիս բառախաղ:

## ՀԱՅՐԵՆԻԷ

Մենդաւայրը ուժեղ ձգողութեամբ կը մագնիսացնէ զգայուն սրտեր: Զարմանալի չէ երբ խրայէլ եփալստոսի տոնն ու սխտորը կը յիշէ կարօտագին: Նոյն իսկ եթէ հայրենիք զուրկ ըլլայ բնական գեղեցկութիւններէ, դարձեալ պաշտելի է այն, զորօր. իսլամաա կղզին Բեւեռին ժող անհրապօր է իր սուկալի ցուրտերով եւ անընդհատ երկրաշարժերով. անոր հողը չպարգեւեր ցորեն, պտուղ, բայց իսլամաացին երջանիկ է այնտեղ, Թէեւ հազիւ կը գտնէ ափ մը հող բուսելէն մշակելու: Բայց չուզեր քամուսիլ անկէ: Ան ընդհանապէս որտեղ կամ ձրկնորս է եւ կը կրօնի իր նաւով Ովկէանու կոհակներուն հետ եւ կը յամառի չհեռանալ իր հայրենի սահմաններէն եւ երբ իր ձկնորսանաւը ծովեզերքի ժայռագօտիններուն դէմ կը ջախջախուի, ջուտասհատիր, նոր մը կը շինէ. իր երջանկութիւնն է այդ կեանքը, որովհետեւ հոն է իր հայրենիքը:

Ուրեմն բնական է որ տարաշխարհիկ գաղթականը հիւժի իր հայրենիքէն հեռու, ըլլայ ազգուն տեղայն հոգի մը, Թոյլ եւ յեղյեղուկ, կողոպտուած բախտէն, հալածական: Ներկան չծպտիր իրեն, իսկ ապագան ծածկուած է Թանձր քօղով մը, մինչ հայապագան ծածկուած է Թանձր քօղով մը, մինչ հայրենարդութեան կրակը կը տալորէ հայրենազուրկ Թշուառին սիրտը եւ կը հառաչէ. «Ոտար ասաղիբ լոյս չունին, օտար ծաղիկ բոյր չունի»:

Երբևէ, այն դառն բաժակը ցմբուր քամել մեր  
ցեղին վիճակուած է եղեր. մեծագոյն չարիք չէ՞  
միթէ հայրենիքի տարուկ նուիրական ծոցին մէջ՝  
ուր իր հայրերը Թաղուած են, զգանելի գերեզմանի  
հանգիստը երկարատև. տուաչտանքներէ վերջ:  
Հայրենասէրը իր հայրենիքին քաղցրութիւններուն  
պատար կ'ըգայ ցլերջ, անոր յիշատակներով հի-  
զին կը խաչտայ, ասի քնական զգացում է յանէտ  
անջնջելի: «Մեր հայրենիքին յարումը, կ'ըսէ Շադո-  
պրիան, այն ատեն աւելի կ'ըգանք, երբ հեռացած  
ենք անկէ. իրականը պակսելուն պէս մարդ կը ջա-  
նայ երազներով մտանիլ. հայրենական յարկ կը  
կարծէ երբեմն խրճիթ մը, երբեմն ալ անտառ մը,  
հովիտ մը, բլուր մը հայրենիքի անուշ կոջումով  
կ'որակէ: Անտրումաք Սիմոն կը կոչէ վտակ մը,  
որ ծննդավայրին մեծ գետը կը յիշեցնէ: Մեր հայ-  
րենիքին ավերէն հեռու ամբողջ բնութիւնը փոք-  
րիկ է ու մեր կորսնցուցածին ստուերն է միայն»:

Ս. Գ.

**ՀԱՅՐԵՆԻՔ.** — Հայրենիքին բարերը աւելի տար  
են քան բարեկոնի փոտերը:

*Խիկար*

— Ելի գոտի մէջ կը զարմանամ Թ, խօտուն արձան մը  
կայ ելեր, Մեմսոններ, իմ աշխարհիս ամէն բարերն, ալ  
կը խօսին սրտիս:

*Խիկար*

**Հայրենասէրի մտածումը (Պատմութիւն).** —  
Օր մը Նիսի մէջ Գր. Օտեան բանի մը բարեկամներով  
նստած ատեն հարցում կ'ըլլայ Թ, իրենցմէ իւրաքանչիւրը  
որ Ազգէն եղած ըլլալ պիտի ուզեր, եմէ ճնկէ առաջ, ի-  
րեն խորհուրդ հարցուէր: Մէկը, «Անգղիացի» կ'ըսէր. —  
Ռերի մը «Ֆրանսացի».— Երբոր մը «Գերման» եւայն:  
Կարգ Օտեանին կուգայ, ամէնը անհամբեր են Թ, ի՞նչ  
պիտի բար: Ան մեղմ ժպիտ մը շրճանքին վրայ.

— Ո՛չ Ֆրանսացի, ո՛չ Գերման, ո՛չ Իտալացի, ո՛չ  
Անգղիացի, կ'ըսէ: Ալ պիտի ուզի Հայ ճնած ըլլալ, եմէ  
Հայ չճնէի, որպէս զի աւելի աշխատանք ունենամ.

Իսկ Պարսիզգլանեանի Գամբանականին մէջ կ'ըսէ. —  
«Էլ լաւ ուշ դրեր, հայրենիք մը կայ. հայրենիք մը, որ իր  
փառքին մէջ կը փայլի, սիրելի դիւրին է: Իսկ Պարսիզ-  
գլան այն հայրենեաց նուիրած է գինքը, որ ինկած էր եւ  
անխառնակ»:

(Գր. Օտեան, Հրատարակիչ Մ. Կազմարա-  
եան, Կ. Պոլիս): Տպ. «Գառն» 1916:

**Ինչ մը դիցարանութիւն:**

Փիւնիկ Թաչուն քառ նախնի առապելներու, միակն իր  
տեսակին մէջ, կ'ապրէր շատ դարեր Արարիոյ անապատնե-  
րուն մէջ, երբ մահը կը մտածայ, կուգայ եգիպտոսի Արեգ  
եւ հոն մտնելով արեւուն դէմ կը կենայ եւ ամէնէն տար ժա-  
մանակ իր Թեւերով այնչափ սաստիկ կը բաղխէ որ տար-  
նայով փետուրները կը բոբբոբին եւ ամբողջ մարմինը կ'այ-  
րեն եւ յետոյ այն այրածին մոխիրէն որդ մը կը գոյանայ,  
հետգետէ կը Թեւաւորի եւ առաջինին պէս փիւնիկ Թաչուն  
կ'ըլլայ:

Ողջո՛յն քեզ, ս՛վ, դո՛ւ, դարաւոր Տիգրի՛ս:

Վերջալուսի սողօտ շողերու քաղցր մրտիին տակ, պահելի մը բազմամ փրօւն ակնդ վրայ, կ'ընկղմիմ խոր մտածումի ուկիրանին մէջ եւ կը թաղուիմ քու անցեալի անոյշ յիշատակներու խորը: Ո՛հ, ս՛րբան դառն խորհուրդներ եւ գողանիքներ պոչաւած են քու հարազատ ծոցիդ մէջ:

Նուիրական հայրենիքի ցուրտ եւ սուրբ լեռնեբու ստինքներէն ծորելով կ'ընթանայ ու կը հասնի մերթ հեղատաճ ու մերթ սլորուն: Կը թափառիս ճանապարհիդ վրայ բազմաթիւ գալարագեղ դաշտեր եւ կ'ողողես անթիւ ձորեր ու հովիտներ ու կը կաղմես աշեղ ջրվեժներ: Կը սաճիս ու կ'անցնիս ա յնքան արագ, ա յնքան ուժգին:

Տիգրի՛ս, սարափ եւ ստեղծ կը պատեն հոգիս, երբ կը դիտեմ զքեզ. ջուրերդ սղտոր, ալիքներդ արիւնտ, որոնք կը պատեն մեզի հին դարերու վայրագութիւններն ու սարափները:

Ո՛հ, ծիծեռնակ մը ԲԼԼԱՅԻ խօսուն եւ թռչէի ու թառէի պաղուկ ու ջինջ ուկերուդ մօտ, որոնք եղած են հայ ցեղիս պաշտելի եւ սրբազան օրրանը: Սոխակ մը ԲԼԼԱՅԻ դալձալուղ եւ երգէի յիշատակներդ տխուր ձակտիդ վրայ:

Լո՛ւր է սուկայն նա: Ըսէ՛, չունի՛ս դէթ խազրիկ մը անոյշ՝ Արարատի ձիւնապատ լեռներու բարձունքէն, հայրենիքի գալարագեղ եւ անու-

շարքը բարատամէն, որոնց մէջ պահ մը կ'ողջունէինք Հայկազնեան, Արշակունեան եւ Բագրատունեան մեծ իշխաններն ու դաճակալները:

Սիրտս խռով, հոգիս վրդով, ձեռներս դաղգաջ ու թաց աչքերով ուխտի կողամ ես ծնկաչաք բռնաջեւ, ս՛վ դու Տիգրի՛ս, որ պատերուս նուիրական եւ սրբազան յիշատակներով յապեցած՝ կը մանչես, որդես ուռիւծ, եւ տակաւն պիտի մանչես, որքա՛ն ստեն գարեր շարունակեն իրենց յաւիտենական ընթացքը արեւերքի անեղբուրեան մէջ: Սպրեցայ երկար տարիներ քու եղբրքիդ մօտ ու խոր մտածումի ուկիրանին մէջ ընկղմած բազմիցս սղջունցի զքեզ, ու դուն լուհիր: Յառումի եւ վրէժի ձայն բարձրացուցի եւ դուն մնացիր անտարբեր կողմս: Եթէ օր մը փակեմ՝ աչքերս յաւիտենապէս ու ալլ եւս տշխարճ ինծի համար դառնայ ոչնչութիւն, այն տտեն, ս՛հ, այն ատեն Գերեզմանի մըթութեան մէջէն կրկին պիտի դիտեմ զքեզ՝ քու յաւիտենական յիշատակով անմուտց:

Ձեմ՝ յուսահատիր, չեմ Լքանիր: Վստահ եմ թէ օր մը պիտի ժպտիս դու ինծի, ու ես պիտի սղջունեմ քու հայրական փառքը՝ Մատիս բարձր կատարներուն վրայ՝ այնքան վեհօրէն ու հպարտօրէն:

Ուրեմն, կրկին կ'ըսեմ քեզի, ողջո՛յն քեզ, ս՛վ դո՛ւ, դարաւոր Տիգրի՛ս:

ՄԵՍՐՈՊ ՔՂԷՅ. ՕՐՋԱՆԵԱՆ

4 Մայիս 1935, Բերքակ (Իրաք)

Վասիոր իր ալիքներու ծփանքը երկարած իբր  
 ժառագէէն դէպի Ռսկեղջիւր՝ չքնաղ աւազան մը  
 ձեւացուցած է հոն, զոր կը շրջանակեն արուարձան-  
 ներ. անոնց նկարչական մէկ բարձունքը կը գրաւէ  
 Խասգիւղը, զոր Մ. Չերազ այսպէս նկարագրած է.  
 «Մէկ կողմէն Ռսկեղջիւրի ծոցով մանեկաւոր, միւս  
 կողմը Գարս Աղածի բլրակով եւ Օգ Մէյտանիի  
 դաշտերով սահմանափակուած»: Խասգիւղի սա-  
 բաշարթին վրայ կանգնած է Գալֆանի Որբանոցը  
 ջերմ աղօթողի դերքով, իրեն դրացի ունենալով Մ.  
 Ստեփանոս եկեղեցին եւ Ներսէսեան վարժարանն,  
 իրեն պահակ կեցած. իսկ շրջակայքը հանդրուան  
 երբեմնի հայ աւագանիին, մեր Կրեստներուն, փառք  
 անցեալին: Այժմ խաթարուած, անշքայտ է  
 Խասգիւղ, կարծես սգաւոր այրին է իր վշտին մէջ  
 ամփոփուած, բայց առաքինութեան առաքելուհի  
 մը քոյր գթութեան՝ ջահաւորեց ամայութիւնը  
 տեղւոյն, ոչինչ ազդուած աշխարհի ալէկոծումե-  
 րէ՝ կանգնեց հոն սիրոյ գեղեցիկաշէն հովանոցակ եւ  
 սղջագուրեց իր գրկին մէջ տարիներ առաջ թշուա-  
 ռութեան խլեակներ, մատաղ որբուհիներ, որոնց  
 մթին ձակատագիրը պայծառացուց Տրեշտակա-

կենցաղ Սրբուհի մը, գորովալից կուսամայրը այդ  
 դժբախտներու:

Ու հիմա այնմա՛հ երանութեամբ վարձատրուած  
 իբր գերազանց սգի անբաժան է իրեններէն եւ ա-  
 նոր ստուերը կը շրջի դեռ Խասգիւղի բարձունքը,  
 շարունակելով կեանք մը՝ որ վերջ չպիտի ունե-  
 նայ բնաւ եւ իրմով կը սրտապնդէ իր յաջորդ-  
 ները:

Գալֆանի Որբանոցը շարունակութիւն է  
 նախնի դարերու եւ նմանօրինակ հաստատութեանց.  
 անոնցմէ մին էր Հոդեաց Վանքն, առաջին Կու-  
 սաստան ի Հայս, Ս. Բարթողիմէոս աւաքեալէն  
 հաստատուած, Վասպուրականի Անձեւացեաց գա-  
 ւառին մէջ, ուր Ս. Կուսին պատկերը միանջնու-  
 չիներուն ձեւքն յանձնելով:

Հիմա Սուրբեալին մօտիկ կ'արձանանայ յա-  
 ւերժ լուսերանդ պատմութեանով Սրբուհի Մայ-  
 ցապետ, մինչ մեծամեծներ աշխարհիկ գիներ-  
 բուքով մոլեղանած կը շլանան շքեղութիւններէ եւ  
 վաղանցիկ հաճոյքներէ եւ հուսկ ուրեմն բազմա-  
 թիւ անկումներէ վերջ անհետ կը կորսուին, այս  
 բարի մայրը կը յողթանակէ, ապագայ սերունդ-  
 ներու փոխանցելով քարքը անուն մը անկորնչելի:

Յաւերժական փառք եւ օրհնութիւն առաքի-  
 նութեան աւանդը երկիւղածութեամբ պահպանող  
 այս հայուհիին:

**ՀԱՅ ՄԻՏՔԵՐ.**— Հարուստն ու աղքատը.— Մէկուն ուրախարար առատութիւնն ու միւսին ցաւատանջ կարօտութիւնը իրենց տեսակին մէջ իրարմէ անկախ երեւոյթներ են՝ որ ընկերաբանական որեւէ սկզբունքով միութեան մը չեն կրնար վերածուիլ եւ պետք է մեկնուին բախտին մէկ կատակովը, որ մէկուն տուեր է բարիքներու յղկանքը եւ միւսին՝ պէտքերու պապակը:

**Եղիշէ Արք. Դուրեան**

**Մկրտութիւն.**— Ամէն ինչ աւանդութիւն է մարդկութեան մէջ, Բնութեան մէջ ալ ամէն ինչ շղթայաւորում մը, այս է զոր «Շարունակութեան օրէնք» կ'անուանէ Լայպնից: Մկրտութիւնը, խորհրդանշով մը կը հաստատէ եւ կը բացատրէ աւանդութեան օրէնքը եւ բարոյական ու իմացական տոհմակցութեան կապը ճնողին ու ճնելոյն, հարց եւ որդւոց, անհատին ու ազգային-կրօնական ամբողջին մէջտեղ: Անցեալին, ներկային ու ապագային սուրբ գրկախառնութիւնն է այս:

**Ռ. Յ. Պէրպէրեան**

**Դադափար.**— Մարդը կը մեռնի, իր ամբազոյն դաստակերտները կը չքանան, այլ գաղափարը ուղիղ կամ սլախալ, անմահ կը մնայ:

**Մ. Զերայ**



— Լեցուցեք ձեր մտքը, որչափ որ լայն ըլլայ:  
**Կեօթէ**

**ԱՆԴՐԱՆԿ ԱՐՅՈՒՆՔԻ ՅՈՒՅԸ**

Տե՛րեհի ՄԸ ՊԷՍ ԴԵՌ ԿՐ ԿԱՌՁԻ ՌԻՍԵՐՈՒՍ

*Գեղեցիկ էր Էլմասը...*

Թաղարի մէջ ծլած մանուշակ, դաշտերու գեղին շուշանին հասակովը: Մազերը՝ արեւին շողովը, ու ձուկատը՝ սպտղերու արծաթէն փայլուն:

Տէր թուրիկենց ամբողջին փառքն էր անիկա, մենք՝ հպարտ էինք անով: մեզմէ ամէն մէկը՝ կը մտենար երկիւղածութեան քովը քոյր վայելքովը, ինչպէս ուխտաւոր մը՝ կրօնքի խորհրդաւոր սաճարներուն...:

Էլմասը՝ գեղեցիկութեան հարսն էր, հրաշքէ մը ծնած: Անոր մուտքը մեր մէջ՝ լուսատուի հմայքը կը բերէր: Ո՛վ պիտի չուզէր շնչել անարատութիւնը անոր կուսութեան, զով ու բուրումնաւէտ, առտուան դէմ՝ կանաչներուն վրայ նստած ցօղին պէս...: Անոր մարմնեղէն կախարդանքը՝ աւելի խոր էր քան լեռներունը...:

Ի՞նչ արժէր նորիկ ծաղկին աեսքը: Կերան գինարբուքները՝ ի՞նչ են սու...: Մեր գեղը՝ ի՞նչ էլմասը ունէր, անոր հոգիին ջերմութիւնը կը գլէր տաքութիւնը արտաբան դաշտերուն, եւ երեսները մեր կեռասնիներուն վրայ իջնող արբուքին գունին պէս էր...:

Ու էլ մասը, որ մը, Տէր թուամիկինց ամբըօցին մէջ հնկաւ. անոր կախարդական գպիտը՝ նորօրինակ երգի մը արուեստովը լեցուց, հոն՝ իրենց մանկութիւնը հիւսով տղաքը: Ու անիկա՝ ուղեղներու մէջ կաթող հրաշագոյն տեսիլքը եղաւ, ո՛ւ լեռներուն վրայ՝ ծորող գարունը աւետաբեր: Սիրոյ ծանր երկնաքար ինկած, գիւղացի տղոց սիրտերու անմեղ հրապարակին վրայ...:

Համբոյրի մարդագետին կափ-կանս՛ն, ու սիրոյ մաշեցնող հեղեղա՛տ...: Կ՛ուղես բաղեղ մը բլլալ եւ փաթթուել անոր հասակին, բայց՝ չես իշխեր, սիրտ չես ընէր, քանզի կը վախնաս, որ մարդկային արատաւոր շունչը՝ կը խամբեցնէ շքեղանքը անոր պերճ դեղեցկութեան...:

Անոր հետ՝ խռովքը մտաւ Տէր թուամիկինց ամբըօցը: Մանկութիւնն ալ իւր յոյզը ունի եւ մոլեգիին կարօտը սիրուած բաներուն: Մանկութեան ածունեւորուն մէջ՝ սերը իշխանի մը պէս է, ու բաղձանքը՝ կեանքին թելերը կը թրթռացնէ ջութակին լարերը դողացնող արուեստագետին պէս:

Անգիտակ օրերու աւապարին տակը՝ վաղուան սիրոյ ցուրը կը պառկի: Միւր դեռ հասուն չէ, բայց՝ զգայնութիւնը, մո՛ւթ խորշի մը մէջ ինքզինքը կը յորդարէ...: Էլ մասը՝ ամբըօցին մէջն է. մենք՝ ոտքի վրայ ենք, անիկա՝ ճրագն է, ու մենք՝ խտուտիկ թիթեռնիկներ, կը դառնանք իր կեղծն, բայց՝ դիմովցնող լոյսին շուրջը...: Տղոցմէն մէկը

իր մաղբերն կը քաշէր, մէկը՝ անոր շունչին իր շունչը կը խառնէր, եւ ուրիշ մը՝ անոր նայուածքի կրակին մէջ, իր վաղուան երիտասարդութեան ստուերը կը պտտցնէր...:

Էլ մասով հպարտ էին Տէր թուամիկինց ամբըօցին մանուկները: Մենք՝ յալթախան էինք էլ մասով...:



Մեր գիւղը հաղիւ երեսուն հինգ երգիքներ կը համբէր իր հորիզոնին տակ: Երեսուն հինգ վախճախուկ տուներ՝ պինդ փակած հողին, որ նց պատերու բարձրութիւնը եղի մը հասակէն ցած էր...: Այդպէս էին մեր տուները:

Շատ անգամներ, արտի աշխատանքէն փախ տուած դոմէշները, կամ՝ բուերէն հալածական ձիերը, ինքզինքնին կը նետէին մեր տանիքներուն վրայ, առապարէ առապար կը ցատկէին, երգիքէ երգիք կը վազվզէին, ահ ու սարսափ ձգելով տուներէն ներս...:

Մեր տուները՝ իրարու դէմ՝ քէն ու ստելութիւն չունէին. իսկ հպարտութիւնը՝ երբեք: Կեանքը՝ միասնական է այն տեղ, եւ անոր պատմութիւնը՝ հասարակաց: Բանդի, մեր պապերը, ուղեր են մարգկութեան տալ դերագոյն ոճը՝ տաճարտուններուն:

Յաճի՛կ, խոնարհ եւ միտախօս: Սիրոյ եւ մը-

տերմութեան թեւերովը իրարու կապում: Մէկունս  
ուրախութեանը միւսին է, եւ ուրիշի մը սուգը՝ ե-  
րակներէն սոհող արիւնին պէս, կ'անցնի տունէ  
տուն, եւ սիրտէ սիրտ: Մենք՝ այսպէս ենք: Կը  
մերժենք անձնականութիւնը ինչքան ալ ստեղ-  
ծագործող ըլլայ անիկա: Եսին չգարտութիւնը կը  
ցաւցնէ մեզ: Մեկուսացած աստուածութիւն մը կը  
դադրի զօրութիւն ըլլալէ, եւ անիկա՝ զերբնա-  
կանը պիտի չունենայ: Ապրող Աստուածները իրենց  
գոյութիւնը կը պարտին բազմութիւններու...:

Եւ ասիկա՞ մեր աւանդութիւնն է: Գիւղին այ-  
լատերութեան հաւատքը: Ահա՛ թէ ինչու՞ մեր  
տուները իրարու կպեք են, քով քովի եկեր, ու  
փաթթուեր՝ զիրար սիրող երկու քայրերու պէս...:  
Մենք՝ զաւակներն էինք այս ցածլիկ տուներուն,  
վիշտով ու բերկրանքով եղբայրացած յարկերուն:  
Մենք՝ իրարու նման: Եւ մենք՝ մեղմէ գուրս,  
չունէինք մեզի նման...:

Գիւղի մանուկներուն թիւը տասնըհինգէն ան-  
գին չէր անցներ: Գլուխը բաց, կուրծքն ու բա-  
ղուկը՝ մերկ, ամառը արեւուն տակ եւ ձմեռը՝ ձիւ-  
ներուն մէջ: Ամբողջ մը պզտիկներ՝ ո՞ր գիւղը  
այդչափ մանուկներ ունէր: Բազմածին էր մեր  
գիւղը, ձկլտուն աղբիւրներուն՝ երգը, մեր հո-  
վիտներուն՝ սլսլոցը, լեւններուն՝ խորհուրդը, եւ  
արտերուն կախարդանքը, իրենց հմայքը թափեր

էին մեր գիւղին վրայ, ամէն ամիս՝ օրօրոց մը  
կ'աւելնար, մանուկ մը կը մտնէր Տէր թումիկենց  
ամբողջը, եւ հաս մը անկէ դուրս կ'եւլէր, կ'եր-  
թար հանգերը աշխատանքի...: Բայց ամբողջը  
միշտ կը մնար իր տասնըհինգովը...:

Ամբողջը մերն է: Հոն ենք աւտուընէ միջեւ  
իրիկուն: Խաղ, կանչ ու շղթայակերծուած չա-  
րածհութիւն: Բարձր էր ամբողջը, մեծ՝ բայց  
չին: Անոր կատարին վրայ հնամաշ աւել մը կը  
անկուէր չին օրերու բարութիւնովը ծանրացած...:  
Դպրոց չունէինք: Սաշակն ու Մեսրոպը անծանօթ  
էին մեզի, մենք կը ճանչնայինք նախորդը Սա-  
խօն եւ Գղեր Մեսրոպ Ապէրը, Մեր դպրոցը՝ Տէր  
թումիկենց ամբողջն օր, մեր գիւղին ու այլ ու  
բերը՝ անոր հայրական Ժպիտն ու օրհնութիւնը:

Օր մը — միջեւ այգ օրը Էլմասը անծանօթ էր  
ամբողջին — մանուկներս նստեր էինք ամբողջին  
առջեւ, ծաղիկաւանջեր կը շինէինք, սափորնիս կը  
զարդարէինք, յաջորդ օրը Համբարձման ՎիճԱԿն  
էր, ու ահա՛ աղջուակ մը տնկուեցաւ մեր գլխուն  
վերեւ, կը նայէր մեզի ու մեր հաւաքած ծաղիկ-  
ներուն: Էլմասն էր: Դեռ նոր լքեր էր օրօրոցը, ե-  
կեր էր ամբողջի կեանքը սկսելու...: Ա՛լ անկէ յե-  
տոյ մեր ընկերուհին եղաւ, մեծցաւ մեզի հետ, ու  
երբեք չբաժնուեցաւ մեզմէ: Միասին ապրեցանք,

միասին խնդացին, ք, միասին թեւերնիս բացին, ք մանկական կեանքի վայելքներուն...:

Տէր թումիկենց ալեւոր թթենին հսկեց մեր սկզբէն երազներու կախարդական աշխարհին:



Էլմասին մեզ ընկերանալու երկրորդ տարեւելոյն էր...:

Օտուեր ծաղկեր ու թափեր էին: Արտերու արբունքէն՝ ցորենը կը կտրմէր...: Արտոյտը երկինքէն իր երգին պատանները կը թափէր հնձուորներու գլխուն վրայ...: Միծեռնակները՝ իրենց ձագերը կը մեծցնէին... ու սարեակները՝ քիւերուն տակ, իրենց բեղմնալից մայրութեան սաղմոսները կը կարգային: Կանաչ ու ծիծաղկատ էր Տէր թումիկենց ծեր թթենին...:

Կեանքին կախարդանքը ամբողջէն դէպի թթենին կը հոսէր, ու անոնք՝ զիրար կը համբուրէին կարօտագին: Երկու ծերերու անօրինակ համբոյրը: Կ'ըսեն թէ, համբոյրը Վայել է երիտասարդութեան, կեանքի այդ հանգոյցին հեղ մըն ալ մօտենալը, արգելուած է ծերերուն...: Ինչո՞ւ ծերութիւնը իր համբոյրը պիտի չունենայ, եւ ինչո՞ւ այսպէս վերջալոյսի խայտանքը վերջին, իրենիամուտի թօշնած թեւերուն վրայ: Միշտ պէտք է համբուրել: Ատիկա՝ էակին իրաւունքն է, երբ ալ

ըլլայ: Անարդար է մարդկային ըզրդին պատգամը: Մեր մը ինչո՞ւ չհամբուրէ... հոգ չէ թէ, ծերին համբոյրը՝ ճերմակ է, չի ստեղծագործեր, քանզի անոր կը պակսի կարմիր հաւատքը երկունքին...:

Հօլա՛: Ամբողջն ու թթենին զիրար կը դարպասեն համբուրելով...: Հեծամտս սէրն է ստիկա, որ ծերութեանն է եւ արգելք պէտք չէ որ ունենայ: Ու վե՛րէն: Անոնց համբոյրին ճերմակ ու թեթեւ կաթիլները կ'իյնան մեր գլուխներուն վրայ...: Մայիսի զով ու մաղ-մա՛ղ անձրեւին նման...:

Վերը՝ Օերութիւնն է...:

Վարը՝ մեր Մտնկութիւնը...:

Երկու դաղտնիքներ՝ կեանքի գորքին տարբեր էջերուն վրայ գրուած: Մինչ մէկը կը սրտիայ միւսը կ'երգէ...:



Օ՛հ: Այդ սուգը:

Ամբան միջինքին էր: Էլմասը միայն քանի մը հեղ երեւցաւ ու խաղտց ամբողջին մէջ: Հեւանդացաւ Էլմասը եւ երրորդ օրը մեռաւ: Ուզեղատապէ բռնուած էր:

Իագաղը անցուցին Տէր թումիկենց ամբողջին առջեւէն, ալեւոր թթենիին տակէն, այսպէս էին փափաքեր իր ընկերները...:

Աղօթքը՝ դանդաղ ու մեռելաբոյր:

Դադաղը՝ սգաւոր եւ ցաւէն ծանրացած: Ծեր թթենին կուլար իր աշունքին բարձունքէն: Երբ մեռելը անցուցին թթենին տակէն, փոթորիկ մը ինկաւ գիւղին վրայ, փրցուց ամբողջին հնամաշ աւելը, եւ նետեց դադաղին... ու սսիկա եղաւ խորհուրդը՝ իր անդամամեկի վշտին, մինչ թթենին ձիւղերը դողուն, վար կը կախէր, կ'ուզէր գրկել դադաղը եւ անշունչ մարմինը կ'ըմամբնէր...:

Դադաղը գերեզմանատուն մտաւ, գիւղին մանուկները անոր ետեւէն...:

Տէր պա՛պա, շատ աղօթէ՛, օրհնէ՛ գերեզմանին բոլոր հողերը, հողին ամէն մի հատիկը, բոլոր խճերն ու աւաղները, օրհնէ՛ արմատախիւ ու ջարդուած բոյները, որոնք մեռան մեռելաթաղին հարուածներէն, եւ անոնք՝ որոնք վաղը պիտի ծլին ու ծածկեն գերեզմանը կ'ըմամբնէր...:

Տէ՛ր պապ, գիւղին մանուկները կը փափաքին որ Ձեր աղօթքը երկա՛ր ըլլայ: Աւետարան մըն ա՛լ: Սաղմոսներդ երկարցո՛ւր...: «Հայր մերդ» թո՛ղ չհատնի...:

— «Հոգոցն հանգուցեցեց»...:

Սպասէ՛, սպասէ՛, Տէր պապա՛...: Մենք խնդրանք ունինք, մենք կը հաւատանք Յարութեան Հրաշքին...: Ատուած չի կրնար չլսել մեզ, եւ կ'ըմամբնէ չի կրնար մեռնիլ...:

Աղօ՛թք մըն ալ, աղօ՛թք մըն ալ, Տէ՛ր պապա...:



Մեր արցունքները՝ թարթիչներու ծայրը կը պտղին...:

Մեռաւ կ'ըմամբնէ: Մեր բարի Տէրտէրն ալ մեռաւ: Գիւղն ալ հիմայ չկայ: Աւերակ է...:

Բայց, ես դեռ կ'սպասեմ Յարութեան Հրաշքին... եւ մանկութեանս յուշը՝ տերեւի մը պէս կը կառչի ուսերուս...:

### ՍՍՍ - ՎԱՆԻ

Սօս - Վանի, բուն անունով՝ կարպետ Յովհաննէսեան, Վանի Շատախ գաւառի թաղ գիւղէն, որ հաստատուած է Արեւիկեան Տիգրիսի եւ Մատիկնայ գետի միացման կետին վրայ: Շատախ հեքեմներու աշխարհ է, ամառապաշտ, երազոտ եւ ազատասեր ըմբոստ: Այս միջավայրին խորագէտ ազդուած է Սօս-Վանի: Իր նախնական կրթութեան ի ստացած Աղծամարի ժառանգաւորաց եւ ազա՛վանի կեդրոնական վարժարանները: Օսմ. Սահմանադրութեան կ. Պոլիս անցած, ուրիշ Ատարազար, անոր կեդր. վարժարանէն ընթացաւորտ, իսկ Մեծ Պատերազմին տարագիր. չարացար տառապած:

Սօս-Վանի ուսուցչութեան նուիրուած է, իսկ իբր գրագէտ ունի շատ յաջող ամառապետներ, պատմուածքներ, բերթուածներ ցրի հրատարակուած օրաթերթերու եւ պարբերականներու մէջ: Այժմ իբր անօրէն կը պաշտօնավարէ Գալպա, հայ մշակութի սերմեր ամանկելու մատաղ սերունդին մտքին:

Ս. Վ.

## ՃԱՓՈՆԻ ԿԵՌԱՍԵՆՆԵՐԸ

Իրր կեռասնին, խնձորենին, ծիրանին, նշենին, գեղձենին և սալորենին — բոլորն ալ վարդազգի բնտանիքին սիրարորոք անդամներ — ծաղկին, կը նշանակէ թէ գարունը եկած է: Բոլորն ալ գարնան յառաջապահներ են: Մանտանդ նշենին, շատ կանուխէն ծաղկելով, կը սիրէ գիրկընդխառնուիլ ծխանի փաթիլներուն հետ:

Բայց մենք պիտի խօսէինք Տափոնական կեռասնիններուն վրայ, որոնք, իրր ծաղիկի ծառեր, շատ նշանաւոր են: Գարնան, ձափոն, այս ծաղկատու կեռասնիններու շնորհիւ, իրական դրախտ մըն է: Կեռասնին՝ շատ հին ժամանակներէ ի վեր կը զարդարէ Տափոնական պարտէզները, ձափոնցիներուն ազգային ծաղիկն է, խորհրդանիշը՝ Տաշակափտական գեղեցկութեան և արտայայտիչը՝ Տափոնական ասպետական ոգիին: Հիւսիսէն հարաւ՝ ձափոնի լեռները զարդարուած են կեռասնիններով, որոնց ծաղկումը գարունը կ'աւետէ: ձափոնական Չօլքլորը ու գրականութիւնը կեռասնիի և իր ծաղիկներուն վրայ լեցուն են գրուածքներով: Լաւածանօթ աւանդավէպերէն մին այն է որ գեղեցիկն «Քօ-նօ-Հանա-Սարիսյա-Հալմ» (կուսածին, որ կը ծաղկեցնէ ծառերը) գարնանային երկնքին

մէջ շատ վարէն կը թռի և քնացող ծառերը կ'արծնեցնէ իր փափուկ շունդով: Ուրիշ աւանդավէպ մըն ալ կ'ըսէ թէ՛ գարնանային լուսնակ գիշերով հինգ հուրիներ կը աւառնին օդին մէջ և ծաղիկներով կը զարդարեն կեռասնինները Եօշինոյի մէջ, որ ձափոնի էն հին և էն նշանաւոր կեռասի նահանգն է:

Հին ժամանակներ Տափոնական կեռասնիններու ծաղիկներ միաթերթ էին, իսկ հիմա, յարասուն աշխատանքներու շնորհիւ, շատ գեղեցիկ բազմաթերթ հարիւրի չափ նոր տեսակներ ձևաքնտրուած են:

Պ՛ղ ուրեմն արմէշներու հայրենիքին մէջ ալ, նման Ամերիկայի Միացեալ Նահանգներուն, փողցները զարդարուին Տափոնական գեղատեսիլ և հոտաւէտ կեռասնիններով և հոգեկան անփոխարինելի վայելքով լեցուն հայ հիւսիսականներու սրտերը:

### ՍԵՊՈՒՀ ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՄԵՏՈՒՍԱ, երբ կատաղիներէ մն. ի սկզբան յոյժ չբնալագեղ և հերազանձ, բայց սա Ամենաբ Սնամանելուն՝ աստուածուհին վերածեց անոր մագերը սոսկալի օձերու և անոր աչքերուն տուա մոլեգնութիւնը իրեն նա յողները բարերու փոխակերպելու: Պերսէոս կտրեց անոր գլուխը և իրեն հետ կը տանէր՝ գործածելու զայն իր արշաւներուն՝ իր Սնամները բարերու փոխելու: Այս իմաստով ակնարկութիւն կ'ըլլայ Գրականութեան մէջ Սեպտուսայի Գլուխին:

Կալվաթայէն կը դրեն.— Հնդկաստան եւս ոչ անտարրեր ազգային շարժումին, Հոկտ. 12ին արքեցից հանդէս Ս. Գրքի Թարգմանութեան 1500ամեակի առթիւ տեղւոյն Մարդասիրական ձեմարանում նախագահութեամբ գրագէտ Տէր Գարեգին Աւագ քահանայի, մասնակցութեամբ ձեմարանի եւ Գաւթեան դպրոցի ուսանողութեան: Իսկ եկեղեցական հանդիսաւոր արարողութիւն նոյն ամսոյ 20ին, նազարէ-Թայ Ս. եկեղեցին:

— Նաեւ Հոկտ. 17ին, Հնդկահայ ծանօթ բարերար Պ. ԳԱԻԻԹ Տ. ԳԱԻԻԹԵԱՆ իր ծննդեան 78րդ տարեդարձը տօնեց մեծ շրով, ուր ներկայ եղած են 500 հրաւիրեալներ, պատուուած Տօխ Թէյյասեղանով մը, որոնք լետոյ Գաւթեան դպրոցի շատ յաջող մանկական երեկոյթին եւս հանդիսատես եղած են:


Երկար կեանք հնդկահայ այս բարերար վէժէրանին, նոյնպէս նոյն տեղացի Պ. Պետրոս Հ. կրէտի, առաջնոյն նման ծանօթ բարեսէր:

ԵՐԳՐ.— Երգերը մեր բարոյի գործը կը տեսնեն: Ժողովրդեան սիրտը կը կակղացնեն: Ներդաշնակ երգը անձին վրայ կ'ազդէ:

ԽՐԻՒԹԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Երուսաղէմի Մայրավանքն անցեալ տարի երկու արժէքաւոր եկեղեցականներ կորսնցուց, որոնք են.

ՄՍՏԹԷՈՍ ԵՊ. ԳՍՅԼՔՃԵԱՆ և Լ ՍՄԲՍՏ ԵՊ. ԳՍԶՍԶԵԱՆ, առաջինը եօթանասամեայ, երկրորդը ծնած կ. Պոլիս, Սիւրար 1873 Յուլիսին. աշխարհական անունով Ռոպէնտն: Երկուքն ալ անձուէր իրենց ուխտին եւ լաւ գնահատուած իրենց պաշտօններով: Առաջինը իբր գանձապետ ծառայեց, իսկ Սմբատ կայ. 1909ին Պոլիս անցած՝ փոխանորդութեան պաշտօն վարեց Երուսաղէմի եւ Պոլսոյ Պատրիարքութեանց: Վերջին տարիներուն Երուսաղէմ կոչուած ծառայելու, բայց մահը վերջ տուաւ իր նուիրումին:



մավկայի եւ Պոլսոյ «Նոր Լուր»ն մէջ. իր յանկուցիչ ոճն

ԵՓՐԵՄ Ծ. Վ. ԱՊՐՈՅԵԱՆ, Մնած Գաղատիա, 1862 փետր. 18 եւ վախճանած 1935 Յունուարին, կանուխէն վենետիկ անցած մարգուեցաւ հոն Ս. Ղազարու Ակադեմիային մէջ Մխիթարեան Ուխտին աւանդութիւններով, եղաւ սրբատուն միանձն, հայ մտաւոր մշակոյթի սիրահար. իմաստալից գրութիւններ սփռեց «Բազմավկայ»ի եւ Պոլսոյ «Նոր Լուր»ն մէջ. իր յանկուցիչ ոճն

եւ յտակ լեզուն՝ իր անունը սիրելի ընծայեցին հանրու-  
թեան: Իր անուանակից Սուրբին Եփրեմ՝ Խուրիի համար  
կ'աւանդուի Սէ ճնած ատեն ճնողը իրենց երազին մէջ  
տեսած ըլլան որմի պողպակից բարունակ մը երախային  
բեմին ծաւալած, երախային ապագային կանխագուշակ,  
այս տեսիլքը կը նոյնանայ մեր Հ. Եփրեմի կեանքով: Ափ-  
արհ, որ իր Սուրբին պէս երկարակեաց չեղաւ եւ շուտ  
վակից աչքերը: Բայց վերջին անգամ իր ազնուական հո-  
գին կարապի երգ մը արձակեց, ներքող Տարեցոյցիս, գրա-  
ւալան բաղբը սիրոյ: Յարգանք իր անմեռ յիշատակին:

**ՄԻՆԱՍ ԾԱԼԵԱՆ**, Պարտիզակցի, ընծացաւարտ  
Պէպէթի Ռոպէրթ Գուլէնի, յետոյ ուսուցիչ Պոլիս: Վերջին  
տարիներուն եգիպտոս, Գահիլիի Գալտեան վարժարանի  
Տնօրէն: Գրած է ընդհ. պատմութեան դասընթացք, մեռած  
է 1935 Յունուարին:

**ԳԷՈՐԳ ՍԹԱՍՊՈՒԵԱՆ**, երիտասարդ փաս-  
տաբան, եղբերական տրկածի զոյ 18 Ապրիլին, որդի բնիկ  
Քեմախիացի Յակոբ Ստամբուլեանի (Օսմ). Սահմանադրու-  
թեան վերջ առաջին Թղթատարական նախարար): Մոլոր-  
Տիկին Մառի Զինադադարին Պոլսոյ Հայ Կարմիր Խաչի  
Ատենապետուհի: Պ. Գեորգ իբր փաստաբան, լրագրող,  
ազնիւ եւ բարեհամբոյր, իր մտաւոր բանքերով՝ Արդա-  
րութեան պալատին զարդերէն էր: Իրաւամբ փարիզեան  
Յերմեր միաբերան դրուատիր նուիրեցին եղբերաբխտ ե-  
րիտասարդին մահուան առթիւ:

**ՆՇԱՆ ԳԱԼԳՂՃԵԱՆ**, նախ Պոլսոյ Ֆրանս. հիւ-  
պատոսարանի պաշտօնեայ, յետոյ Փարիզ արտաքին գոր-

ճոց պաշտօնատան: Երկար տարիներ իր պաշտօններով  
գնահատուած եւ օգտակարապէս ծառայած իր ազգակից-  
ներուն՝ անոնց երախտագիտութեան արժանացած է, ըլլա-  
լով մողովրդական համակրելի դէմք մը, նոյնպէս օտար  
շրջանակի մէջ. բայց իր զակին եզերական կորուստէն ընկ-  
նուած այս բարի հայր անցեալ տարի հրաժեշտ տուաւ  
կեանքին:

**ԵՐՈՒՍՆԻ ՊԷՅ ԱՂԱԹՈՆ**, ճնած Կ. Պոլիս,  
վկայեալ հողագետ Կրինտնի երկրագործական վարժարա-  
նէն 1883ին, Հիմնադիր - Բարերար անդամներէն մին Հ.  
Բ. Ը. Միւռնեան եւ յետոյ փոխ - Դախագահ նոյն Միւռ-  
նեան Տնօրէն Խորհրդոյ: Յիշեալը իր ազգին բարօրութեան  
նուիրուած ախպար մէկն էր, խորապէս ազգասէր, ոչ  
միայն նիւթական նպաստներով, այլ եւ տաղանդովն իբր  
հողագետ. իր կեանքին դաւանանող հիւանդութեան մէջ  
իր երկասիրած երկու երկրագործական աշխատութիւններ,  
հազարաոր տրիւնակներով ձրի բաշխեց ամէն տեղի հայ երկ-  
րագործներուն, մեռաւ ի Նիս ցուլիս 19ին:

**ԿՈՄԻՏՏԱՍ ՎԱՐԴԱՊԷՏ**, ճնած 1869 Սեպտ.  
ի Կուտինա, վախճանած Փարիզ 1935 Հոկտ. 21, տասնե-  
չորս տարիներու տառապանքի վերջ, մեծ վարպետ հայ ե-  
րաժշտութեան, կանուխէն մարզուած նախ Էշմիածին, յե-  
տոյ Պերլին, աշակերտած հռչակաւոր երաժշտագետ Է.  
Ծախիմի: Այնուհետեւ իր դաշնաւորած երգերով, սարբած  
համերգներով համատարած համբաւ վայելեց, արձանացած  
միջազգային գեղարուեստի բարձունքին վրայ՝ ուր փառքի  
դասիններ պակեցին զանի: Բայց, աւա՛ղ, անողորբ հի-

անդուծիւնը դաւեց անոր կեանքին, չարչարելով զանի եւ  
հուսկ ուրեմն զգետնեց զանի. բայց անունն անկորնչելի է,  
հայ սոխակն էր ան, զոր մահը լուեցուց, բայց իր երգերու  
արձագանգը յաւերժական է:

Ի՞նչը երանի հայ ստեղծագործ հաննարին:

Հ. Արսէն Բագրատունիի տաղերէն «Մահ Սոխակին»ը  
կը նուիրեմ Կոմիտասի յիշատակին իբր սրտաուշ ողբ.

« Աչք գեղեցիկ ցողազին

Լացէք ըզմահ սոխակին,

Աչք լուսալիւր աստեղաց

Բզոսխակին հարէք լաց:

Փռոյն պարիկը ամենայն

Շուրջ ակրմբեալ ի քո ձայն,

Տան քեզ սրախ. երանի.

Ձիք քեզ անդ ոք նըմանի»:

**ՇԻՐՎԱՆՁԱՏԷ**, բուն անունով Աղեքսանդր Մով-  
սէսեան, ծնած 7 Ապրիլ 1857 Շիրվանի մէջ (Կովկաս) եւ  
մեռած 1935 Օգոստոսին:

Մեր ժամանակակից հայ գրականութեան հզօրագոյն  
վարպետներէն՝ լիովին տուած է ինչ որ իր տաղանդը կըր-  
ցած է արտադրել լուսագոյն, վէպեր իրապաշտ ուղղու-  
թեամբ, պատմութեան, թատերգութիւններ: Յիշենք մի  
բանին, **Արտիստը, Յաւապարը, Եւգենէն, Բառուը,**  
**Պատուի համար, Նամուսը, Չար ոգին,** ելլին. ելլին.:  
Վ երջին տարիները անցուց Հայաստանի մէջ:

Imp. A. DER AGOPIAN  
17, Rue Damesme - P a ris



«Ազգային գրադարան»



NL0148401

13475

